27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 192(4810)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# «Ադրբեջանական գազը Եվրոպա հասցնելու ճանապարհին էլ ոչ մի խոչընդոտ չմնաց»

**Ադրբեջանն ու Թուրքիան ստորագրել են գազի մատակարարման, տարանցման եւ առուվաճառքի համաձայնագիրը, որի մասին այդքան նշվում էր, հատկապես դեպի Եվրոպա գազատարների եւ Ռուսաստան ու տարածաշրջան հարաբերությունների առումով:**

**Ադրբեջանական լրատվամիջոցները, որ ուղեկցում էին Ադրբեջանի նախագահ Ալիեւին Թուրքիա այցելության ընթացքում, տեղեկացնում են, որ համաձայնագիրը վերաբերում է ադրբեջանական գազը «Հարավային միջանցք»-ի շրջանակներում Եվրոպա տեղափոխմանը:**

**Ինչ վերաբերում է Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունների առումով Ալիեւ-Էրդողան կենացասացությանը, ապա դրա պակաս չի զգացվել, չնայած Վանում երկրաշարժի գոտին շարունակում է ցնցումներ ապրել:**

**Այդուհանդերձ, ինչպես ադրբեջանա-թուրքական գազային համաձայնագրի ստորագրումը մեկնաբանել է Թուրքիայի էներգետիկայի նախարար Թաներ Յըլդըզը, «ստորագրումից հետո ադրբեջանական գազը Եվրոպա հասցնելու ճանապարհին էլ ոչ մի խոչընդոտ չմնաց», ընդ որում, ըստ նրա խոսքերի, 2017-2018 թթ.ադրբեջանական գազը «Շահդենիզ-2» հանքավայրից կհասնի Եվրոպա:**

Ա. Հ.

# Տիգրան Սարգսյան. «Ովքեր չեն համագործակցի Հանրապետականի հետ, կհայտնվեն կոտրած տաշտակի առջեւ»




ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մայր աթոռին հարկային արտոնություններ տալու օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ «**Ազգի**» հարցին երեկ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** պատասխանեց, թե Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին պատկանող գույքը պետք է վերադարձնել Մայր աթոռին, այդ հնարավորությունը պետք է ստեղծել: Այդ օրենսդրական փոփոխության արդյունքում համայնքների բյուջեների տուժելու մտահոգությանն ի պատասխան վարչապետն ասաց, որ համայնքները ֆինանսական վնասներ չեն կրելու, որովհետեւ տարածքային կառավարման նախարարության հաշվարկները ցույց են տալիս, որ տվյալ տարածքների վարձակալության վճարները չնչին գումարներ են կազմում, այնպես որ համայնքները վնաս չեն կրի:

Իսկ ե՞րբ են օտարվել այդ տարածքները Մայր աթոռից. «Այդ հարցը տվեք պատմաբաններին, նրանք ձեզ մանրակրկիտ կպատասխանեն՝ երբ, ինչպես են օտարվել, ինչ է կատարվել Մայր աթոռի ունեցվածքի հետ», ասաց վարչապետը: Իսկ թե այդ ունեցվածքի անվան տակ կարող են այլ մարդիկ իրենց օբյեկտները հարկերից ազատել, ըստ վարչապետի՝ այդպիսի բանը բացառվում է, քանի որ օրենսդիրը հստակ ֆիքսում է, որ լինելու են հոգեւոր ծառայության մատուցմանը ծառայող առարկաներ եւ օբյեկտներ: Ցանկերը քննարկվելու եւ հաստատվելու են կառավարությունում: Իսկ թե ի՞նչ նախնական ցանկ էր ներկայացրել Մայր աթոռը, որն ընթերցվեց Ազգային ժողովում, դրանից տեղյակ չէր վարչապետը: Կառավարությունը հավանության կարժանացնի ցանկերը միայն օրենքն ընդունելուց հետո: Տ. Սարգսյանը նշեց, որ օրենքի նախագիծը քննարկվում է արդեն երկուսուկես տարի՝ հիշեցնելով, որ երբ այցելում են տարբեր պատմամշակութային շինություններ, միշտ բարձրացվում էր հարցը, թե ինչո՞ւ դրանց նկատմամբ պատշաճ վերահսկողություն չկա, ինչո՞ւ սեփականատերը իր գործառույթները չի կատարում:

*Տես էջ 2*

ՀՈԴՎԱԾ 31

# Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ հօգուտ Թաներ Աքչամի



Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածը խախտում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հոկտեմբերի 25-ի որոշման՝ թուրքական կառավարությունը խախտում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված ազատ խոսքի իրավունքը՝ քրեական օրենսգրքի 301 հոդվածով հետապնդելով դոկտոր Թաներ Աքչամին՝ Հայոց ցեղասպանության մասին իր կարծիքը հրապարակավ արտահայտելու համար:

Ինչպես տեղեկացնում է Ամերիկայի հայկական համագումարը, դատարանը վճռել է, որ «թրքություն» տերմինի փոխարինումը «թուրք ազգի» արտահայտությամբ «չփոխեց կամ զգալի տարբերություն չդրեց այս երկու հասկացությունների մեկնաբանությունների միջեւ, քանի որ ընկալվում են նույն կերպ Վճռաբեկ դատարանի կողմից...»:

Դատարանի վճռի ամփոփիչ խոսքում նշվում է. «Հայցվորի՝ Թաներ Աքչամի նկատմամբ քրեական հետաքննումը եւ 301 հոդվածը հայկական հարցի դեպքում կիրառելու թուրքական քրեական դատարանների դիրքորոշումը, ինչպես նաեւ հայցվորի դեմ իրականացվող հանրային քարոզարշավը հաստատում են փաստը, որ գոյություն ունի հալածանքների նշանակալից վտանգ այն անձանց նկատմամբ, ովքեր արտահայտում են «անբարենպաստ» կարծիքներ այս հարցի շուրջը եւ մատնանշում են այն փաստը, որ հայցվորին սպառնացող վտանգը իրական է»:

Աքչամը ողջունել է դատարանի որոշումը՝ նշելով, որ Թուրքիան պետք է սովորի, որ «սեփական պատմությունն ընդունելն ու անցյալում տեղ գտած մարդու իրավունքների խախտումների հետ համակերպվելը հանցանք չէ, այլ տարածաշրջանում խաղաղության ու հաշտեցման հասնելու նախադրյալ»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# Հոկտեմբերի 27-ի ողբերգության հերթական տարելիցը

**Այսօր լրանում է 1999 հոկտեմբերի 27-ի ողբերգության հերթական տարելիցը: Այդ առթիվ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը ժամը 11:30-ին պատգամավորներին հրավիրեց ԱԺ այգի՝ զոհված պետական այրերի հուշահամալիրի մոտ հարգելու նրանց հիշատակը:**

# Թուրքիան կընդունի առաջարկված օգնությունը՝ զուտ մարդասիրական կարիքներին

**Թուրքիան երեկ հայտարարել է, որ պատրաստ է ընդունել երկրաշարժի առնչությամբ տարբեր երկրների առաջարկած օգնությունը, այդ թվում՝ Հայաստանի եւ Իսրայելի, մեկ շտկմամբ, որ ակնկալվում է օգնություն երկրաշարժից տուժածներին: Ըստ թուրքական լրատվամիջոցների, մոտ 30 երկրների գրություններ են ուղարկվել, պարզաբանմամբ, որ առանց առաջարկված օգնությունից օգտվելու հնարավոր չէ վերացնել երկրաշարժի հետեւանքները:**

**Հայաստանն, ի դեմս երկրի նախագահի, եւս պատրաստակամություն էր հայտնել աջակցելու հարեւան երկրին, ու թեեւ Թուրքիայից որեւէ գրություն դեռ չի ստացվել, սակայն, Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի հայտարարությամբ, Թուրքիան իրեն աջակցող երկրներից օգնություն ստանալու հարցում որեւէ խտրականություն չի դնում, թեեւ Գյուլը բավականին խտրական է մեկնաբանել, թե ինչու Ադրբեջանն ու Իրանն էին առաջին օրվանից տրամադրել իրենց օգնությունը:**

**Ըստ Գյուլի, ամենից առաջ մոտ գտնվելն էր պատճառը, որ այս երկու երկրների օգնությունն են ստացել Վանի մերձակայքի բնակչությունն ու փլատակների տակ հայտնվածները, մինչդեռ Հայաստանը եւս հեռու հարեւան չէ:**

**Այդուհանդերձ, ըստ էության, որեւէ մեկին փլատակների տակ կենդանի գտնելու հույսեր այլեւս չկան, թեեւ Թուրքիան ընդունելի է ներկայացրել դրսի օգնությունը բնավ էլ ոչ փրկարարական աշխատանքներին աջակցելու առումով, այլ, ըստ էության, զուտ մարդասիրական կտրվածքով՝ օգնություն ակնկալելով վրանների, ժամանակավոր կացարանների, տաք հագուստի եւ ջեռուցման միջոցների տեսքով:**

Ա. Հ.

# Բրիտանացի խորհրդարանականը եւ ադրբեջանական քարոզչական խմբավորումը

***«Հետախուզական կոմիտեում ներգրավված բրիտանացի խորհրդարանականը վարձատրվում է ադրբեջանական քարոզչական խմբավորումից» վերնագրով հոդված են ստորագրել Ռաջեհ Սյալը եւ Սոլոմոն Հյուզը անգլիական «Գարդիան» թերթում: Ստորեւ թարգմանաբար այդ հոդվածը:***

Խորհրդարանի պահպանողական անդամներից մեկը, որ նաեւ երկրի անվտանգության ծառայությունների կոմիտեում է ընդգրկված, տարեկան 6 հազար ֆունտ ստեռլինգ (կամ 9 հազար 400 դոլար) է ստանում ադրբեջանամետ քարոզչական մի խմբավորումից:

Լոնդոն եւ Վեստմինստեր քաղաքները ներկայացնող խորհրդարանական Մարկ Ֆիլդը միացել է «Եվրոպական Ադրբեջան ընկերություն» խորհրդատվական վարչությանը:

Արտաքին գործերի նախարարությունն ու միջազգային համաներումն այս տարի քննադատել էին Ադրբեջանի կառավարությանը՝ քաղաքական բարեփոխումներ պահանջող ցուցարարներին տանջելու համար: Լեյբորիստական խորհրդարանականները հարց են բարձրացրել, թե արդյոք տեղի՞ն է Ֆիլդի անդամակցությունը այդ կառույցին, հաշվի առնելով բրիտանական հետախուզական կոմիտեում լինելու նրա հանգամանքի նրբությունը:

Քառասունվեցամյա Ֆիլդը այդ կոմիտեում երբեւէ ծառայած ամենաերիտասարդ խորհրդարանականն է: Կոմիտեն վերահսկում է Բրիտանիայի անվտանգության ծառայությունները եւ անմիջականորեն հաշվետու է 10 Դաունինգ սթրիթի առաջ: Կոմիտեն առանձնահատուկ է, որովհետեւ բաղկացած է ինը խորհրդարանականներից, որոնց նշանակում է հինքը՝ վարչապետը: Ունի առավել մեծ լիազորություններ, քան խորհրդարանական այլ կոմիտեներ:

Ֆիլդը, որ խորհրդարանի համակուսակցական խմբավորման նախագահն է, ադրբեջանական ընկերության խորհրդատվական վարչության անդամ է դարձել հունիսին:

Անցյալ մայիսին նա հինգ օրով Ադրբեջան էր մեկնել՝ հանդիպելու ազերի բարձրաստիճան քաղաքագետների հետ: Ուղեւորությունը արժեցել էր 3.500 ֆունտ ստեռլինգ (5.500 դոլար): Իսկ 2010 թվականի հուլիսին նա Բաքվում հրավիրված ՆԱՏՕ-ի կոնֆերանսում ելույթ էր ունեցել: Այս տարվա մարտին իշխան Էնդրյուն, հանդիպելով Ֆիլդին Բուքինգհեմյան պալատում, Ադրբեջանում բրիտանական ներդրումների համար աջակցություն էր խնդրել նրանից խորհրդարանում եւ Ուայթհոլում:

«Եվրոպական Ադրբեջան ընկերությունը» ստեղծվել է 2008-ի նոյեմբերին՝ նպատակ ունենալով ընդլայնել Ադրբեջանի ծանոթությունը միջազգային հանրության շրջանում:

*Տես էջ 8*

# Եվս 18 մլն դոլար ոռոգման ցանցի համար

*Հայաստանին հատկացրել է Համաշխարհային բանկը*

Համաշխարհային բանկի տնօրենների խորհուրդը հաստատել է Հայաստանի ոռոգման համակարգերի հրատապ վերականգնման ծրագրի համար 18 մլն դոլար վարկի հատկացումը: Այդ մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսում խոսեց ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավար **Ժան-Միշել Հափին**: Նա տեղեկացրեց, որ ծրագիրը սկսվել է 2009-ին, դրա համար տրամադրվել է 30 մլն դոլար, եւ կավարտվի այս տարվա դեկտեմբերին: Նոր՝ 18 մլն դոլարով նախատեսվում է շարունակել իրականացրած աշխատանքները եւ նորոգել 110 կմ ջրանցքներ, որից մոտ 60 կմ-ը ներտնտեսային ցանցի նորոգումն է: Դա, ըստ ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարի, հնարավորություն կտա վերականգնել ոռոգումը մոտ 6500 հա հողատարածքների վրա, տարեկան խնայել 44 մլն խմ ջուր, ստեղծել մոտ 7000 կարճաժամկետ աշխատատեղեր եւ 2100 մշտական աշխատատեղեր գյուղատնտեսության մեջ: Ոռոգման համակարգի նորոգման եւ արդիականացման նոր ծրագրից կօգտվեն Հայաստանի 7 մարզերի՝ Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի 88 հազար բնակիչներ: Ժան-Միշել Հափին հիշեցրեց, որ նախկին ծրագրի շնորհիվ նորոգվել են 90 կմ մայր ջրանցքներ, մոտ 97 մլն խմ-ով կրճատվել կորուստները, ստեղծվել 12 հազար ժամանակավոր աշխատատեղեր:

«**Ազգի**» հարցին, թե ինչո՞վ էր պայմանավորված նոր վարկի տրամադրումը ոռոգման համակարգին՝ նախորդ ծրագի՞րն էր կիսատ մնացել, թե՞ նոր ծրագիր է կազմվել, Ժան-Միշել Հափին պատասխանեց, որ Համաշխարհային բանկի եւ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրերով այս ոլորտում ունեցած հաջողությունները հիմք հանդիսացան շարունակելու այս ծրագիրը: Նրա պարզաբանմամբ, կային որոշ նախագծեր, որոնք չհասցրեցին ավարտել, քանի որ ծրագրերը ավարտվեցին: Նոր ծրագրով պետք է ֆինանսավորվի այդ նախագծերի իրականացումը:

Ժան-Միշել Հափին հայտնեց, որ նոր ծրագիրը կազմում է 40 մլն դոլար, եւ դեռեւս մնում են 22 մլն դոլարի աշխատանքներ ոռոգման համակարգում: Նրա կարծիքով, հավանաբար այդ ֆինանսավորումը հաստատվի եկող տարի:

Ա. Ս.

# ՀԲ-ն կանխատեսում է 4,5 տոկոս տնտեսական աճ

*Կարեւորելով հարկաբյուջետային կոնսոլիդացումը*

Խոսելով եվրոգոտում հնարավոր ճգնաժամի եւ Հայաստանի վրա դրա ազդեցության մասին՝ ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավար Ժան-Միշել Հափին այն տեսակետը հայտնեց, որ ճգնաժամը ոչ թե գալիս ու գնում է, այլ շարունակում է ազդեցություն թողնել երկրների տնտեսությունների վրա: Նա նշեց, որ գնահատում է այն ջանքերը, որ իրականացվում են Հայաստանը արտաքին ցնցումներից պաշտպանելու համար: ՀԲ ներկայացուցչի կարծիքով, հարկաբյուջետային գործընթացի կոնսոլիդացումը կնպաստի դրան: Միաժամանակ, Ժան-Միշել Հափին նշեց, որ համաշխարհային տնտեսության աճի տեմպերը ներկայումս գտնվում են 2,4-2,8 տոկոսի սահմաններում, եւ հաշվի առնելով որոշ պետությունների պարտքի ցուցանիշը, այն կարող է դանդաղել: Հայաստանի համար ՀԲ-ն այս տարի կանխատեսում է համախառն ներքին արդյունքի 4,5 տոկոս աճ, իսկ 2012-ի համար՝ 4-5 տոկոս աճ:

Եկող տարի նախատեսվող հարկային եկամուտների 101 մլրդ դրամի աճի եւ Հայաստանի կառավարության հարկային նոր փաթեթի վերաբերյալ Համաշխարհային բանկի մոտեցման մասին խոսելով՝ Ժան-Միշել Հափին ասաց, որ իրենք սերտորեն աշխատում են պետեկամուտների կոմիտեի եւ ֆինանսների նախարարության հետ հարկային վարչարարության բարելավման եւ հարկային քաղաքականության արդիականացման ուղղությամբ: Նա հիշատակեց ընդերքի մասին նոր օրենքը, որը հնարավորություն կտա այս ոլորտից հարկային վճարումները ավելացնել եւ միաժամանակ գրավիչ դարձնել օտարերկրյա ներդրողների համար: ՀԲ ներկայացուցիչը նշեց, որ հատուկ ջանքեր են գործադրվում, որ հարկերի հավաքումն ավելանա առավել խոշոր 500 հարկատուների հաշվին:

Ա. Ս.

# Մայքլ Ջեքսոնը՝ ամենահարուստ հանգուցյալ



Forbes պարբերականը հրապարակել է այն ամենահարուստ հանգուցյալների ցուցակը, որոնց անունը մահվանից հետո էլ շարունակում է գումարներ վաստակել: Երկրորդ տարին անընդմեջ ցուցակը գլխավորում է փոփ արքա Մայքլ Ջեքսոնը, ում հետմահու եկամուտը 2010 հոկտեմբերի 3-ից սկսած 170 միլիոն դոլար է: Ձայնասկավառակների վաճառքից եւ «This is it» ինքնակենսագրական ֆիլմից ստացված եկամուտը միասին կազմել է 275 միլիոն դոլար: Երկրորդ հորիզոնականն, ըստ ամսագրի, զբաղեցրել է Rock & Roll-ի արքա Էլվիս Պրեսլին: Նրա հետմահու եկամուտը կազմել է 55 միլիոն դոլար: Մերլին Մոնրոն վաստակել է 27 միլիոն դոլար: Ամենահարուստ հանգուցյալների ցանկում են նաեւ Ջոն Լենոնը, Ջորջ Հարիսոնն ու Էլիզաբեթ Թեյլորը:

Հ. Հ.

# 6 դրամ Սամվել Ալեքսանյանի համար

*Կլանվում է «Երեւան-սիթի»-ներում*

Մեր համաքաղաքացիներից շատերն այդպես էլ չեն հասկանում, թե «Երեւան-սիթի»-ներում ապրանքների գները ինչո՞ւ են 5-ով կամ 9-ով (ասենք 135 դրամ կամ 699 դրամ) վերջանում: Նրանք, ովքեր եղել են եվրոպական կամ ամերիկյան սուպերմարկետներում, որտեղ նման գնանշումները բավականին տարածված են, ենթադրում են, որ մեզ մոտ եւս դա արվում է հոգեբանական ազդեցություն թողնելու համար: Սակայն, պարզվում է, դա արված է ամենակոնկրետ՝ նյութական շահ ստանալու նպատակով: Ասենք, երբ գնված ապրանքների հանրագումարը վերջանում է 5 դրամով կամ 7 դրամով, դա կլորացվում է հօգուտ աճող թվի: Ավելի պարզ՝ 1847 դրամի գնումների դեպքում գանձվում է 1850 դրամ: Շատերը կասեն, հետո ի՞նչ, մաթեմատիկայում 5-9-ը կլորացվում են հօգուտ աճող թվի: Հետո այն, որ կլորացվող գումարի մանրը չի երեւում ՀԴՄ կտրոնի մեջ, այլ ապորինի մուտք է գործում սուպերմարկետի գանձարան: Երկրորդ, այդ մանրը մանր է յուրաքանչյուրիս համար, բայց եթե հաշվենք, թե քանի հազար մարդ է մտնում «Երեւան-սիթի»-ներ, որոնցից գրեթե յուրաքանչյուրը թողնում է կլորացվող մանրը, ապա դժվար չէ ենթադրել, որ այն վերածվում է տասնյակ միլիոնավոր դրամների՝ ամսվա ընթացքում: Բայց սա էլ ամբողջ չէ:

Երբ գնված ապրանքը վերջանում է 4 դրամով, ապա այդ դեպքում եւս «Երեւան-սիթի»-ներում կլորացվում է հօգուտ աճող թվի: Ասենք՝ 954 դրամի գնումների դեպքում, գնորդին արդեն մանր չի վերադարձվում, գանձելով 1000 դրամ, իսկ այդ 6 դրամը եւս մնում է սուպերմարկետների սեփականատեր Սամվել Ալեքսանյանին: Մնում է միայն ասել, որ եթե նա այդ 6 դրամի կարիքը շատ ունի, թող հայտարարի այդ մասին, եւ մենք գուցե համաձայնենք այդ գումարը թողնել նրան, այլ ոչ թե տանք փողոցում փող խնդրող ինչոր տատիկի: Իսկ եթե ոչ, ապա թող հրահանգի, որ այսուհետեւ մարդկանց հիմարի եւ մաթեմատիկա չիմացողի տեղ չդնեն՝ գցելով նրանց տրամադրությունն ու քայքայելով նյարդերը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



# Տիգրան Սարգսյան. «Ովքեր չեն համագործակցի Հանրապետականի հետ, կհայտնվեն կոտրած տաշտակի առջեւ»

*1-ին էջից*

**Եվ երկուուկես տարի առաջ կառավարությունը խոստում է հնչեցրել օրենսդրորեն կարգավորել խնդիրը, որ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին պատկանող գույքը նրան վերադարձվի: Եկեղեցին լինի սեփականատեր, կադաստրում գրանցվի սեփականության իրավունք եւ իրավական գործողություններ իրականացվեն այդ գույքի հետ: Ըստ էության որոշ եկեղեցիներում այդ գույքը տնօրինվում է Մայր աթոռի կողմից, բայց իրավաբանորեն ձեւակերպված չէ: Այսինքն, գնահատեց վարչապետը, օրենսդրական փաթեթը հնարավորություն է տալիս շտկելու իրավիճակն այս դաշտում:**

**Վերջին շրջանում իր կուսակցության ակտիվության եւ կուսակցական տոմսեր բաժանելու մասին հարցին ի պատասխան՝ այդ բոլորը Տ. Սարգսյանը նորմալ կուսակցական շինարարության գործ համարեց. երբ գործադիր մարմնի անդամները տոմսեր են հանձնում, նշանակում է, որ ավելի լուրջ վերաբերմունք են ցույց տալիս անդամակցության գործընթացին, եւ կուսակցաշինարարությամբ նպատակ կա ավելի ամրացնել Հանրապետական կուսակցությունը՝ գալիք ընտրություններում ամրապնդելով ՀՀԿ-ի դիրքերը:**

**«Ազգը» փորձեց ճշտել խորհրդարանում շրջանառվող այն լուրերը, որ այսօր կամ վաղը ՀՀԿ գործադիր նիստում վերջապես քննարկվելու է ԲՀԿ-ի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու հարցը: Վարչապետը մի փոքր փոխեց հարցի ուղղությունը՝ նշելով, որ Հանրապետականն այն կուսակցությունն է, որի շուրջը համախմբվել են կոալիցիոն գործընկերները, առանցքն է քաղաքական դաշտի, այդ դիրքը Հանրապետական կուսակցությունը ոչ միայն պահպանելու է, այլեւ զարգացնելու է. «Մենք համախմբված ենք հանրապետության նախագահի շուրջը, մտադիր ենք ավելացնել մեր տեսակարար կշիռը քաղաքական դաշտում, դա չենք անելու մեր գործընկերների հաշվին եւ փորձելու ենք մեր հեղինակությունը բարձրացնել: Բոլորի համար ակնհայտ է, որ այդպես էլ լինելու է, որ Հանրապետականն է լինելու բոլոր համախմբումների առանցքը», ասաց հանրապետական վարչապետը՝ զգուշացնելով բոլոր նրանց, ովքեր լուրեր են տարածում ՀՀԿ-ի մասին, որ չարաչար սխալվում են, եւ հանրապետության նախագահն էր նշել, թե ՀՀԿ-ն կամուրջ է կառուցում բոլոր նրանց համար, ովքեր Հանրապետականի հետ կհամագործակցեն. «Համոզված ենք, որ նրանք կշահեն, իսկ ովքեր չեն համագործակցի Հանրապետականի հետ, կհայտնվեն կոտրած տաշտակի առջեւ», նկատեց Տ. Սարգսյանը:**

**Հանրապետականում թեւեր կա՞ն (Տիգրան Սարգսյանի, Հովիկ Աբրահամյանի, Կարեն Կարապետյանի). «Դրանք հիմնականում բամբասանքներ են, որոնք իրականությունից շատ հեռու են, բայց որ ամեն օրգանիզմի ներսում կան տարբեր տեսակետներ, դա նորմալ երեւույթ է, եւ առանց այդպիսի երեւույթների հնարավոր չէ զարգացում: Կուսակցության ներսում էլ կան տարբեր տեսակետներ՝ ապագայի, ներկայի վերաբերյալ, եւ դա ապահովում է կուսակցության զարգացումը», նշեց նա:**

**Լրագրողներից մեկը հարցրեց, թե արդյոք հեղինակություն չունեցող գործիչների անունների ընդգրկումը ՀՀԿ ցուցակում (նկատի ուներ Պարույր Հայրիկյանին, Արտաշես Գեղամյանին եւ Խոսրով Հարությունյանին) կնպաստի՞ ՀՀԿ-ին: «Դուք տվեցիք երեքի անունը, ես կարող եմ տալ առնվազն մեկ տասնյակ հայտնի քաղաքական գործիչների անուններ, որոնք ուզում են եւ պատրաստ են համագործակցել ՀՀԿ-ի հետ: Եվ մենք նույնպես պատրաստ ենք համագործակցել նրանց հետ, որովհետեւ մեր թիմի ղեկավարը բազմիցս ասել է այն մասին, որ Հանրապետական կուսակցությունը համախմբող կուսակցություն է, որ պատրաստ է համագործակցելու մեր երկրի ապագան կառուցելու գործում, մենք նույնպես պատրաստակամ ենք համագործակցելու... Իսկ թե ով է լուսանցքային, ով՝ ոչ (հարցի մեջ այդպիսի բնորոշում էր հնչել), հանրությունն է տալիս գնահատականը ընտրությունների միջոցով, եւ մեր ցուցակը կազմելիս հաշվի ենք առնում, թե այս կամ այն քաղաքական գործչի նկատմամբ հանրության վերաբերմունքն ինչպիսին է: Այդ քաղգործիչները փորձ եւ հեղինակություն ունեն եւ անցել են մեծ ճանապարհ»:**

**Արդյոք «կոտրած տաշտակ» խոսքը ԲՀԿ-ի՞ն է վերաբերում. այս հարցին ի պատասխան վարչապետը կատակեց, թե նոր առիթ է տալիս հարցը տվող լրագրողին՝ տասնյակ հոդվածներ գրելու:**

**Իսկ Ազգային Ժողով -կառավարություն հարցուպատասխանի ժամանակ, պատասխանելով Շիրակ Թորոսյանի՝ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու վերջին հայտարարությունների մասին հարցին, Տիգրան Սարգսյանը խորհուրդ էր տվել հարեւան երկրի ղեկավարի հայտարարությունը զգուշորեն մեկնաբանել, քանի որ Հայաստանը պետք է անի հնարավորը հայվրացական հարաբերություններն ամրապնդելու ուղղությամբ: «Ուստի մեր կողմից նպատակահարմար չէ հակառակ հայտարարություններն անելը: Վրաստանի քաղաքական իշխանության հետ մենք նորմալ հարաբերություններ ունենք եւ մտադիր ենք հետայսու եւս զարգացնել դրանք»:**

**Իր հայտարարության մեջ Վրաստանի նախագահը ասել էր, որ Վրաստանի պետական ապարատը կատարյալ է՝ հայկականի համեմատ: «Մասնավորապես, նա անդրադարձել էր Տավուշի մարզի սողանքին՝ հայտարարելով, որ դրա հետեւանքները Վրաստանը կվերացներ մի քանի ժամում: Ես ինքս Վրաստանի հասցեին հավասարակշիռ արտահայտությունների կողմնակից եմ, բայց հավասարակշռությունը պետք է փոխադարձ լինի», ահա այսպես արձագանքեց Շ. Թորոսյանը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Դատախազության շենքը թեքահարթակ չուներ, մետրոն թեքահարթակ չուներ, քաղաքապետն էլ զբաղված էր

Հայաստանում բնակվող 172.000 հաշմանդամների հիմնական խնդիրը տեղաշարժման մատչելիությունն է եւ աշխատանքի տեղավորումը: Մայրաքաղաքի կարեւոր կառույցների 90 տոկոսը թեքահարթակ չունի: Հաշմանդամները կատակում են, որ իրենց մասին անհանգստանում են միայն միջազգային կազմակերպությունները: Նրանք շրջել են քաղաքով, լուսանկարել քաղաքի կարեւոր կառույցները, պարզվել է, որ թեքահարթակ ունեն միայն միջազգային բրենդ ներկայացնող խանութները ու միջազգային կազմակերպությունների գրասենյակները: Հաշմանդամները հանրապետության այն քաղաքացիների թվին են պատկանում, որոնց իրավունքները ամեն օր խախտվում են: Նրանք ցավով են փաստում, որ տրանսպորտն իրենց համար ստեղծված չէ:

Հաշմանդամների ազատ տեղաշարժման խնդիրների նպատակով երեկ հաշմանդամներն ու մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը երթ էին կազմակերպել: Նախ նրանք հավաքվեցին Երեւանի մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանում, սակայն մետրոյից օգտվել չհաջողվեց՝ թեքահարթակ չկար: «Այն, ինչ հասանելի է բոլորին, պետք է հասանելի լինի նաեւ հաշմանդամներին: Կան շինարարական նորմեր, որոնց հիման վրա կառուցվող շենքերը պետք է հարմարեցված լինեն հաշմանդամներին, բայց մեր կյանքում փոփոխություններ չենք զգում: Օրենքը կա, սակայն չի գործում», նշեց «Ունիսոն» ՀԿ-ի ղեկավար **Արմեն Ալավերդյանը**: Երթի մասնակիցներին չհաջողվեց օգտվել նաեւ հասարակական տրանսպորտից՝ «Բոգդան» ավտոբուսները թեքահարթակներ չունեին: Հաշմանդամների երթը շարժվեց դեպի դատախազության շենք, սակայն ներս մտնել կրկին չհաջողվեց. պետական կառույցը թեքահարթակ չուներ, իսկ աստիճաններով դժվար է՝ մեկ հաշմանդամին աստիճաններով բարձրանալու համար 2-3 հոգու օգնություն է անհրաժեշտ: Դատախազություն ներս մտնելու անհաջող փորձից հետո հաշմանդամները շարժվեցին դեպի քաղաքապետարան: Պարզվեց՝ քաղաքապետը զբաղված է: Հաշմանդամներին հուզող հարցերին պատասխանեց քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ **Հենրիկ Նավասարդյանը**: Երկու ամսից Հայաստան ներկրվող 66 ավտոբուսները հարմարեցված չեն հաշմանդամների համար: Սակայն Նավասարդյանը խոստացավ, որ իրենց ուժերով թեքահարթակներ կտեղադրեն, ավտոբուսում 2.5 մետր տարածք կառանձնացնեն հաշմանդամների համար: Նավասարդյանի մեկնաբանությամբ՝ «Բոգդանի» մեջ համապատասխան հարմարանքներ չեն տեղադրվել, որովհետեւ հնարավորություն չեն ունեցել: Հաշմանդամները հասարակական կազմակերպությունների ու մարդու իրավունքների պաշտպանի անունից նամակ փոխանցեցին Կարեն Կարապետյանին՝ խնդրելով, որ հասարակական տրանսպորտը, թատրոնները, շենքերն ու պետական հիմնարկները հարմարեցվեն հաշմանդամներին:



ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՆԱԴԱ

# Այս անգամ Ռուանդայի եւ Ադանայի ջարդերի մասին

Լույս է տեսել Կանադայում գործող ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի եւ Ցեղասպանության եւ մարդու իրավունքների ուսումնասիրման միջազգային ինստիտուտի («Զորյան» ինստիտուտի բաժանմունքներից) հրատարակած «Ցեղասպանության ուսումնասիրություններ եւ կանխարգելում» պարբերականի հերթական համարը, որն այս անգամ ներառում է հոդվածներ Ռուանդայի եւ Ադանայի կոտորածների մասին:




Ամերիկյան «Էր Ուեյվ քոլեջի» դասախոսներից Սթիվն Բըրջեսը քննարկում է, ստացված մամլո հաղորդագրության փոխանցմամբ, «Աֆրիկյան պաշտպանողական ուժեր» ստեղծելու անհրաժեշտությունը, իսկ Տորոնտոյի համալսարանում դոկտորական ատենախոսության թեկնածու Ռեջինե Կինգը գրում է «Ճշմարտության բացահայտման հանձնախմբերի առկայության պարագաներում հոգեկան-սոցիալական վնասվածքների բուժման» մասին:

«Անարյուն հեղափոխությունից դեպի արյունալի հակահեղափոխություն» հոդվածում դոկտ. Պետրոս Տեր-Մաթոսյանը անդրադառնում է 1909-ի Ադանայի կոտորածներին եւ քննարկում մի կողմից թուրքական տեսակետը, որ ժխտում է կառավարական պաշտոնյաների առնչությունը եւ մեղադրում հայ հեղափոխականներին, մյուս կողմից՝ հայկական տեսակետը, որ մեղադրում է «Միություն եւ բարգավաճում» թուրքական կոմիտեին՝ տարածաշրջանում հայկական տնտեսական զարգացումը քայքայելու համար:

Չորրորդ գլխավոր հոդվածը գրված է միջազգային հարաբերությունների տեսաբան Ջորջինա Հոլմսի կողմից եւ քննարկում է ԶԼՄ-ների դերը բացահայտելու կամ կոծկելու կատարված կամ կատարվող ցեղասպանությունը: Տվյալ դեպքում նա անդրադառնում է Ռուանդայի դեպքերին BBC-ի արձագանքներին եւ եզրակացնում, որ «Նյուզնայթ» ծրագիրը 1994-ին չհամարձակվեց պատասխանատվության կանչել բրիտանացի քաղաքագետներին:

Եվ վերջապես, Ցեղասպանության եւ մարդու իրավունքների ուսումնասիրության միջազգային ինստիտուտի նախագահ պրոֆ. Ռոջեր Սմիթն իր «Զորջ Ստայները եւ պատերազմը հրեաների դեմ» հոդվածում բացահայտում է թերությունները Ստայների ուսումնասիրության մեջ, որտեղ հեղինակը պնդում է, թե հրեաները իրենք են մեղավոր իրենց պատուհասած ցեղասպանության համար:

«Ցեղասպանության ուսումնասիրություններ եւ կանխարգելում» պարբերականը վերոնշյալ ինստիտուտի պաշտոնական օրգանն է եւ հրատարակվում է տարեկան երեք անգամ Տորոնտոյի համալսարանի հրատարակչատան կողմից:

Հավելյալ տեղեկությունների համար այցելել genocidestudies.org կայքը:

# Եթե հնարավոր լինի, ՀԷԿ-ը կկառուցվի «Թռչկան» ջրվեժի ներքեւի հատվածում

Անձնագիր տալ «Թռչկան» ջրվեժին՝ հստակեցնել նրա սահմանները, դադարեցնել ՀԷԿ-ի շինարարությունը, չեղյալ համարել բնապահպանական փորձաքննական եզրակացությունը, ՀԷԿ-ը կառուցել ջրվեժից ներքեւ ընկած հատվածում՝ զարգացնելով էկոտուրիզմը, որը շահավետ կլինի նաեւ կառուցողին: Հենց այս հարցերն են երեկ քննարկվել բնապահպանության նախարարությունում Թռչկանի ջրվեժի պահպանությանը նվիրված քննարկմանը: Հանդիպմանը մասնակցել է նախարար Արամ Հարությունյանը, «Պահպանենք Թռչկանի ջրվեժը» քաղաքացիական նախաձեռնության անդամները, հասարակական կազմակերպություններ, շինարարներ եւ նախագծողներ: ՀԿ ներկայացուցիչները նախարարին են ներկայացրել շինարարական աշխատանքների ընթացքում նախագծային լուծումների խախտման մի շարք փաստեր:

Նախարարի հանձնարարականով կստեղծվի աշխատանքային խումբը՝ բնապահպանության, քաղաքաշինության փորձաքննություն իրականացնող մարմինների մասնագետների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Աշխատանքային խմբին հանձնարարված է ջրվեժում եռօրյա ուսումնասիրություն իրականացնել: Արամ Հարությունյանը շինարարին առաջարկել է եւս մեկ անգամ քննարկել ՀԷԿ-ի կառուցումը ջրվեժից ներքեւ ընկած հատվածում կառուցելու հարցը: Նախարարը համոզված է, որ նման որոշումը բացարձակապես չի ազդի ջրվեժի բնականոն գործունեության վրա: Շինարարը խոստացել է իրականացնել այլընտրանքային հաշվարկներ եւ հնարավորության դեպքում ՀԷԿ-ը կառուցել ջրվեժից ներքեւ ընկած հատվածում:

Հ. Հ.

# Ակադեմիական կոնֆերանս փոխհատուցման հարցերով

Այսօր՝ հոկտեմբերի 27-ին Մասաչուսեթսի Քլարկ համալսարանի «Թիլտոն» դահլիճում իր աշխատանքներն է սկսելու եռօրյա ակադեմիական կոնֆերանսը, որը քննարկելու է ցեղասպանությունների զոհ դարձած ժողովուրդներին փոխհատուցում տրամադրելու հարցերը, տեղեկացնում է «Արմինյն միռոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Կոնֆերանսը, որը կրում է «Հայերի ցեղասպանությունից այն կողմ: Փոխհատուցման հարցը համեմատական վերլուծությամբ» խորագիրը, հովանավորում է Քլարկ համալսարանի «Ողջակիզման եւ ցեղասպանության ուսումնասիրությունների Ստրասլեր կենտրոնը»: Կազմակերպիչն է պրոֆ. Թաներ Աքչամը: Մասնակցում են «ՆԱԱՍՐ»-ի՝ Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի ներկայացուցիչները եւ Էրիկ Ուայթսը՝ Մինեսոտայի համալսարանից: Բացման խոսքով հանդես է գալու սոցիոլոգիայի մասնագետ պրոֆ. Ջոն Տորպեյը, որը 2006-ին հեղինակել է «Զարդվածը վերականգնել: Փոխհատուցման քաղաքականությունը» գիրքը:

Համեմատական քննարկումների ընթացքում անդրադարձ է լինելու հայկականից բացի նաեւ հրեական եւ Ամերիկայի բնիկների ցեղասպանություններին: Քննարկվելու է գերմանացիների փոխհատուցման փորձը:

Մանրամասնությունների համար այցելել www.clarku.edu կամ www.naasr.org կայքերը:

Հ. Ծ.

# Գույժ

**Հայաստանի Հանրապետության կառավարությունը խոր վշտով հայտնում է, որ հոկտեմբերի 26-ին ծանր հիվանդությունից հետո 80 տարեկան հասակում վախճանվել է պետական անվանի գործիչ ու դիվանագետ, Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարար, արտակարգ եւ լիազոր պաշտոնաթող դեսպան Անատոլի Աշոտի Մկրտչյանը եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին:**

**Անատոլի Մկրտչյանի հուղարկավորությունը կազմակերպելու համար ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է կառավարական հանձնաժողով՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ:**

***

**Անատոլի Մկրտչյանի թաղման հանձնաժողովը հայտնում է, որ քաղաքացիական հոգեհանգիստը տեղի կունենա հոկտեմբերի 27-ին ժամը 18-ին, Սայաթ-Նովա, 29, բն. 21 հասցեով:**

**Հրաժեշտի արարողությունը տեղի կունենա հոկտեմբերի 28-ին, ժամը 12-ից-14-ը Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը: Հուղարկավորությունը՝ ժամը 14-ին Երեւանի քաղաքային գերեզմանոցի նոր պանթեոնում:**

# Տարեմուտին Մոսկվայում կբացվի Հայկական գրքի տուն

Մոսկվայի Բասմաննայա փողոցի թիվ 19 տանը տարեմուտին կբացվի Հայկական գրքի տուն: Այդ մասին տեղեկացնում է ԱՊՀ երկրների երիտասարդական միության մամլո կենտրոնը: Ներկայումս շինարարական աշխատանքները շարունակվում են:

Հայկական գրքի տունը համահունչ կլինի Երեւանում հոկտեմբերի 7-ին բացված Ռուսական գրքի տան հետ:

ՌԴ մայրաքաղաքի հայ բնակիչները, անկախ տարիքից, Հայկական գրքի տանը կկարողանա հաճախել հայոց լեզվի դասընթացների: Տանը կգործեն գրախանութ եւ «Հայաստան» մամլո կենտրոն, որը կհամագործակցի Երեւանի Ռուսական գրքի տան «Ռոսիա» մամլո կենտրոնի հետ: Մոսկովյան տունը նաեւ կհրատարակի «Армянский мир России» հանդեսը, որի էջերում կխոսի ռուս-հայկական բազմակողմանի հարաբերությունների մասին:

ԱՊՀ երկրների երիտասարդական միության վարչության խորհուրդը հոկտեմբերի 1-ին որոշել էր ՌԴ քաղաքներում բացել Հայկական գրքի 10 տուն: Խորհրդի նախագահը հասարակական գործիչ Անդրանիկ Նիկողոսյանն է:

# Հերքում

**Պրահայում (Չեխիա) լույս տեսնող համաեվրոպական «Օրեր» ամսագրի խմբագիր եւ «Ազգի» հատուկ թղթակից Հակոբ Ասատրյանից ստացել ենք հետեւյալ հերքումը երեկ տարբեր լրատվամիջոցներով լույս տեսած մի հոդվածի վերաբերյալ, որը կրում էր «Հակոբ Ասատրյան» ստորագրությունը: Ավելորդ չենք համարում նշել, որ նույն նյութը նախորդ օրը ստացել էր նաեւ «Ազգը», սակայն ձեռնպահ էր մնացել հրապարակելուց՝ հոդվածի հեղինակի ինքնությունը պարզած չլինելու պատճառով:**

Ի գիտություն ընթերցողների տեղեկացնում եմ, որ հայկական մամուլում, մասնավորապես «Իրավունք» թերթում հրապարակված «Հայաստանը գունավոր հեղափոխություններ արտահանող երկիր» հոդվածի հեղինակ է նշված իմ անունը՝ Հակոբ Ասատրյան: Պաշտոնապես հայտարարում եմ, որ ես ոչ մի կապ չունեմ նշված հոդվածի հետ: Այն ստորագրվել է Ստեփանակերտից, իսկ ես գտնվում եմ Պրահայում:

Հարգանքով՝

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
Պրահա

# Ուղղում

**«Ազգ» օրաթերթի երեկվա համարում «Պետություն, ճանաչիր քո հերոսներին» հոդվածում տեղ է գտել անճշտություն: Թյուրիմացաբար տպագրվել է Աշոտ Աղաբաբյանի անունը, մինչդեռ Արտաշես Ալեքսանյանը հանդիպել է Արթուր Աղաբեկյանի օգնականին: Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը:**

# Լռության արժեքը

*«Երբ Տեր Աստված տեսավ, որ մարդկանց չարագործությունները բազմանում են երկրի վրա, եւ ամեն ոք իր մտքում ամեն օր խնամքով չարագործություններ է նյութում, զղջաց Աստված, որ մարդ է ստեղծել երկրի վրա եւ տրտմեց իր հոգու խորքում» (Ծննդ. Զ 5-6):*

Երբեք չէի մտածի, որ տարիներ հետո ստիպված կլինեմ խոսքս սկսել դարձյալ աստվածաշնչյան այս տողերով:

Արդեն մի քանի ամիս մրցույթով հաղթած «Հովհ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու 7» դասագրքի գրեթե կես ծավալի չափ, մրցույթով չանցած նույն դասագրքի հեղինակ պարո՛ն Գյուրջինյան, համեստության ու բարեկրթության բոլոր նորմերը ոտնահարելով, զազրախոսում եք՝ երբեմն օգտվելով ձեր հավերժ հավատարիմ զինվորիկների օգնությունից, բայց բացի դատարկախոսությունից, ուրիշ ոչինչ չեք գրում: Մնում է միայն հարցի բարոյական կողմը, ինչն էլ ինձ ստիպեց խախտել լռությունս:

Մեր ժողովրդի բազում իմաստուն խոսքերից մեկն ուզում եմ հիշել. «Լռությունը ոսկի է»: Ես լռում եմ՝ սկսած 2006 թվականից, երբ ձեր հեղինակակցությամբ կազմված «Մայրենի 5-6» դասագրքերը մտան դպրոց: Դասագրքերի այդ մրցույթին նույն փաթեթով մասնակցում էինք նաեւ մենք՝ ես եւ Աշխեն Զրբաշյանը: Հաղթեցիք դուք, ու ես այն ժամանակ լռեցի: Լռեցի ոչ թե նրա համար, որ ասելիք չունեի (քավ լիցի, դուք բազում անգամներ այդ դասագրքերի մասին բացասական կարծիքներ լսել եք ուսուցիչներից ու խուլ ձեւացել), այլ այն պատճառով, որ չփորձեցի ձեզ նման ամենայն դասագրքագիտակի ու դասավորի դեր ստանձնել՝ դա թողնելով համապատասխան մասնագետներին: Լռեցի, որովհետեւ ինձ իրավունք չվերապահեցի պղտորել այն հազարավոր աշակերտների ու ուսուցիչների միտքը, ովքեր սեպտեմբերին իրենց ձեռքը պետք է վերցնեին ձեր դասագրքերը: Լռեցի, որովհետեւ հարգում եմ իմ անձը եւ սիրում հայ դպրոցն ու հայ աշակերտին: Եվ դուք մտաք դպրոց: Հրատարակչության տնօրենը մեզ ընդամենը մխիթարեց. «Ցավում եմ, որ դպրոցը չի ունենա այդ լավ դասագիրքը»:

Իսկ հիմա այլեւս չեմ կարող լռել, որովհետեւ ձեր այս վերջին հոդվածը իմ համբերության բաժակը լցրեց:

Դասագրքերի մրցույթի պատմության մեջ առաջին անգամ կատարվեց շատ դրական մի քայլ. շահած դասագրքերը ներկայացվեցին համացանցում, որպեսզի բոլոր ուսուցիչներն ու համապատասխան մասնագետները իրենց դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնեին շահած գրքերի հեղինակներին՝ դասագրքերն առավել կատարյալ տեսնելու ակնկալությամբ: Եվ այդ գործընթացը իր դրական արդյունքը տվեց: Մասնավորապես մենք ստացանք հարյուրավոր կարծիքներ հանրապետության գրեթե բոլոր մարզերից՝ Երեւանից, Վանաձորից, Վաղարշապատից, Ջերմուկից, Աբովյանից, Գյումրուց, Նոյեմբերյանից, որոնք բոլորն էլ, խիստ դրական արտահայտվելով դասագրքի մասին, արել էին նաեւ առաջարկություններ, հայտնել իրենց ցանկությունները, որոնց որոշ մասը հաշվի առնվեց մեր կողմից: Եթե դուք նախանձախնդիր էիք, որ դպրոց մտներ լավ դասագիրք, ապա միանայիք այդ բանակին եւ մեզ ներկայացնեիք ձեր հիմնավոր դիտողությունները: Բայց ինչպե՞ս միանայիք, երբ չկար ոչ մի լուրջ դիտողություն, բայց կար կույր նախանձ. անձնականը վեր դասելու շահը այնքան էր կուրացրել ձեզ, որ դուք գնացիք այն ծանոթ ճանապարհով, որով բոլոր ժամանակներում էլ անցնողներ եղել են, բայց ի վերջո գլորվել են անդունդը ու պատմության էջերում թողել իրենց անփառունակ անունը միայն: Ձեր ճամարտակությունների մեջ բացի ձեր սեփական անձը գովերգելուց, ինձ անձնական վիրավորանքներ հասցնելուց, ուրիշ ոչինչ չկա:

Արդյոք բարոյական է այդքան ամիսներ մամուլն ու հեռուստատեսությունը, ռադիոն ու համացանցը ողողել ամպագոռգոռ, բայց իրականում գիտական ոչ մի հիմք չունեցող դատարկախոսություններով, փորձել ամեն գնով արշավանք կազմակերպել՝ նպատակ ունենալով փառաբանել միայն սեփական անձն ու գործը: «Լավ, այդ մարդը համեստության ոչ մի նշույլ չունի՞», կհարցնի միամիտ ընթերցողը: Թե՛ ես, թե՛ դուք ունենք գիտական միեւնույն կոչումները՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, որոնք մեզ շնորհել է միեւնույն խորհուրդը: Իմ գիտական գործունեության ընթացքում պարգեւատրվել եմ Հայաստանի Հանրապետության նախագահի եւ վարչապետի շնորհակալագրերով: Կհամարձակվե՞ք ասել, որ դրանք էլ աստված գիտե, ինչ ճանապարհով եմ ստացել:

Կարո՞ղ եք ասել, թե այդ ինչ փաստաթուղթ ունեք միայն դուք, որը ձեզ իրավունք է տալիս աջ ու ձախ ցեխ շպրտել ու վարկաբեկել բոլոր այն մարդկանց, որոնց հանդեպ պարտավոր եք պահել քաղաքավարության գոնե տարրական նորմերը:

Էդ. Աղայանի ու Հովհ. Բարսեղյանի դասագրքերով սերունդներ են կրթվել ու դաստիարակվել: Այսօր Հովհ. Բարսեղյանի անունը միայն հարգանք ու պատկառանք է առաջացնում բոլորի մեջ, եւ եթե հայոց լեզվի դասագրքի վրա դրված է նրա անունը, ապա գոնե դա ձեզ չի զգոնացրել ու զգաստացրել, եւ դուք նրա հեղինակած դասագիրքը իր դարն ապրած եք համարում: Պարոն Բարսեղյանի հետ դասագրքի համահեղինակ դառնալը ինձ համար, այո՛, մեծ պատիվ է ու բախտավորություն, բայց միաժամանակ այնքան պարտավորեցնող, որ ես արել եմ ամեն ինչ, որ արժանի լինեմ նման մեծության կողքին հանդես գալու: Եվ դա ինձ հաջողվել է: Վկա ձեր իսկ խոստովանությունը: Ինչո՞ւ չեք խոստովանում, որ անթաքույց նախանձը հերթական անգամ գլուխ բարձրացրեց ձեր մեջ, երբ լսեցիք, որ պարոն Բարսեղյանը ինձ է համահեղինակ ընտրել: Ձեր բառերով ասած՝ Քաջ Նազարի բախտ: Բայց շտապեմ հիասթափեցնել ձեզ, որ ես միանգամից չեմ տվել իմ՝ համահեղինակ դառնալու համաձայնությունը: Եվ դա ոչ թե նրա համար, որ ձեզ պես մեծամիտ եմ, եւ իմ հարգն եմ բարձրացնում, այլ որ մի քանի անգամ տեսած կինոֆիլմի ժապավենի պես քաջ գիտեի ձեզ նմանի հարձակումների մասին: Հիմա էլ կասեք, թե այդ դեպքում ինչու համաձայնեցի: Համաձայնեցի, որովհետեւ վստահ էի ուժերիս, որովհետեւ գիտակցում էի, որ դպրոցին լավ դասագիրք է հարկավոր, եւ ես կարող եմ իմ ներդրումն ունենալ: Ես դրանում կասկած չունեի, եւ հիմա, յուրաքանչյուր օր ինձ հասած հեռախոսազանգերը այդ են փաստում: Դասագրքի վրա պետք է լիներ նաեւ Էդ. Աղայանի անունը, որը, սակայն, ընդամենը տեխնիկական պատճառով հանվեց, բայց մեծանուն հայագետի վաստակը դասագրքում հավուր պատշաճի ներկայացված է: Անկեղծ ասեմ, որ դասագիրքը շարադրելու ողջ ընթացքում ես ոչ մի անգամ չհամարձակվեցի իմ անունը դնել այդ մեծերի կողքին: Եվ երբ դասագրքի խմբագիր Լիանա Հովսեփյանը առաջին անգամ իր ձեռքով իմ անունը գրեց գրքի վրա, ես խոստովանում եմ ոչ թե ձեր, այլ ողջ հանրության առջեւ, որ արտասվեցի հուզմունքից, արտասվեցի ինձ բաժին ընկած բախտից ու ճակատագրից: Կմտածե՞ք ես՝ գյուղում ծնված ու ընդամենը մի համեստ շինարարի ընտանիքում մեծացած, Հովհ. Բարսեղյանի ու Էդ.Աղայանի դասագրքով գիտելիք ստացած աղջնակս, որ տարիներ հետո պետք է արժանանամ նման գնահատանքի: Դուք դա երբեք չեք հասկանա:

Խոստովանում եք, որ դասագիրքը այնքան էլ վատը չէ եւ անմիջապես դրանում տեսնում քսան ուսուցիչների, ազնվագույն խմբագրի՝ Լիանա Հովսեփյանի վաստակը: Քծնելու ինչպիսի՜ փայլուն եղանակ: Հիասթափեցնեմ ձեզ, պարոն լեզվագետ, դասագրքի վրա աշխատել է քիչ առաջ հիշատակածս ողջ հանրապետության մանկավարժական ներուժը, եւ մենք միայն հպարտ եւ ուրախ ենք դրա համար: Իբրեւ դպրոցի «անկեղծ նվիրյալ»՝ դուք էլ գայիք, կանգնեիք մեր կողքին եւ ոչ թե լցնեիք թերթի էջերը իմ անձը վիրավորող, ձեզ մեծարող եւ այս երկրի ազնիվ մարդկանց անդորրը խռովող հրապարակումներով:




Ձեր կողմից աղբ հորջորջված համացանցում ներկայացված տարբերակի մասին Աբովյան քաղաքից ուսուցչուհին գրում է. «Կարդում եմ հայոց լեզվի նոր դասագիրքը, եւ այն հետաքրքիր է գեղարվեստական գրականության չափ»: Դուք անամոթաբար աղբ եք համարում դասագրքի՝ համացանցում ներկայացված այն մասը, որի հեղինակը, ի դժբախտություն ձեզ, հենց Հովհ. Բարսեղյանն է:

Պարո՛ն Գիտեմնիկ, դուք դպրոցում ներկայացված եք մի քանի դասագրքերով. այդ դասագրքերը ունեն դրական կողմեր, ունեն միաժամանա՛կ բացթողումներ եւ լուրջ բացթողումներ: Բայց ոչ ոք բարոյական չի համարել դպրոց մտած ձեր գրքերի մասին վատ արտահայտվելու, որովհետեւ ոչ ոք ձեր մակարդակին չէ. Մի՞թե դա ձեզ համար պարզ չէ. ո՛չ ոք, կրկնում եմ, չի իջնում ձեր մակարդակին՝ գտնելով, որ դա կանեն ժամանակին այդ գործի մասնագետներն ու պատասխանատուները: Մինչդեռ դուք ձեզ իրավունք եք վերապահել դաստիարակի դեր ստանձնելու իրականում ոչ թե դպրոցի, այլ միայն սեփական ամբիցիաների, սեփական գրպանի մասին մտածելով: Եվ այդ ճանապարհին ոչնչացնում եք ամեն ինչ՝ անգամ չհարգելով այն մարդկանց, որոնց գրքերով ինքներդ եք սովորել եւ ձեր ուղին հարթել:

Տեսնելով, որ տպագրված եւ արդեն աշակերտի սեղանին դրված դասագրքում **Իմացի՛ր**, **Հիշի՛ր** խորագրերը ընդամենը պայմանական նշանով են տրված՝ հիմա էլ գրոհ եք սկսում **Անգի՛ր իմացիր**-ի դեմ: Առնվազն զավեշտալի է ձեր չիմացությունը: Ընթերցողին թյուրիմացության գցելու համար միջոցների մեջ ոչ մի խտրություն չդնելով՝ ի՞նչ եք առաջարկում. քերականության միջից ջնջե՞լ հրամայական եղանակը, քսանմեկերորդ դարի երեխային չասե՞լ Հարգի՛ր ծնողներիդ, Սիրի՛ր քո հայրենիքը, Լսի՛ր մեծերին... Միգուցե ձեր մթագնած ուղեղը ճառագի եւ մեր քերականության մեջ բայի մի նոր եղանակ հրամցնի անուս նվաստներիս: Թե՞ ուսուցչի դեր ստանձնելով՝ ձեզ մեկ անգամ եւս հիշեցնեմ, որ հրամայական եղանակը ցույց է տալիս գործողության կատարման ոչ միայն հրաման, այլ նաեւ թելադրանք, խնդրանք, հորդոր:

Պարո՛ն լեզվագետ, քերականությունը սերտում են ու շատ բաներ էլ անգիր անում. դա ոչ միայն մեր լեզվի քերականությանն է բնորոշ, այլեւ բոլոր լեզուներին (հիշե՛ք հենց միայն անգլերենի անկանոն բայերի ցանկերը): Եթե երեխան անգիր չիմանա դերանուններն ու մակբայները, ապա ինչպե՞ս պետք կատարի ձեր եւ մեր կողմից առաջարկվող վարժությունները՝ տեքստում դրանք գտնելու եւ տարբերակելու. դասագիրքը թեւի տակ դրա՞ծ: Ինքնահաստատվելու մոլուցքով տարված՝ դուք մոռանում եք, որ ձեր դասագրքում նույն այդ ցանկերը տարբերակված գույնով առանձնացված են՝ առանց անգիր անելու հրահանգի. ի՞նչ է, երեխան դրանք չպե՞տք է սովորի: Ձեր իսկ կազմած քննական թեստերում դուք դրանց իմացությունը կարեւորել եք: Սխա՞լ է, որ մենք հրահանգում ենք դրանք անգիր անել: Եվ առնվազն ծիծաղելի ու զավեշտ է ձեր զարմացած հարցադրումը, թե ինչո՛ւ մնացած խոսքի մասերն էլ անգիր անել չենք տալիս: Միամիտ ընթերցողին ձեր ծուղակը գցելու ինչպիսի՜ նենգ ու դավադիր հարցադրում, համեմատության ինչպիսի՜ փայլատակում:

Դարձյալ վերադառնամ անգիրի թեմային, ինչն էլ, անշուշտ, եղավ լռությունս խախտելու գլխավոր պատճառը: Որ ինձ տանել չեք կարողանում, դա ինձ համար պարզից էլ պարզ է դեռեւս 2005 թվականից (վկա նկարի մակագրությունը), բայց որ դուք ոչ մի սրբություն չեք հարգում, ա՛յ դա ինձ համար նորություն էր: «Հայ ասպետ» հաղորդաշարի ա՛յ կարկառուն լեզվագետ, արեւածաղիկ վաճառողին հարցրո՛ւ, եւ նա կասի, որ աշխարհում կա երկու սրբություն, որոնք չընդունողը մարդ կոչվելու իրավունք չունի, ինչ խոսք, նաեւ այդ երկու չափանիշներով է ասուն էակը տարբերվում անասունից. երկու սրբություն՝ մայր եւ հայրենիք: Չէ՛, ներողություն, անասունի համար էլ մայրը մայր է:

Ներկայացված չափածո բազմաթիվ հատվածներից ընդամենը երկուսը հանձնարարված են անգիր՝ Ե.Չարենցի «Մորս համար գազել»-ը եւ Արտեմ Վարդանյանի «Ասաց՝ գարուն է»: Առաջինի մասին չեմ ուզում ոչինչ ասել, բոլորիս է քաջ հայտնի այդ բանաստեղծությունը, եւ այն անգիր իմանալը մեծ խորհուրդ ունի: Իսկ ահա երկրորդին չեմ կարող չանդրադառնալ: Բանաստեղծությունը Արտեմ Վարդանյանը նվիրել է իր հարազատ որդուն՝ «Տիգրան Մեծ» ջոկատի զինվոր Արմեն Վարդանյանին, որի հերոսական մահվան մասին պատմվում է Դնեպրիկ Բաղդասարյանի «Դիմակայություն» հուշագրությունների գրքում: Այդ բանաստեղծությունը ոչ մի դասագրքում երբեւէ ներկայացված չի եղել:

Հարգելի՛ ընթերցող, չեմ ցանկանում չարաշահել Ձեր համբերությունը. ուղղակի այդ բանաստեղծության վերջին հատվածը ուզում եմ ներկայացնել Ձեզ.

*Արդեն գարուն է, եւ դու չես գալիս,*
*Եվ դու չես գալիս ձորերով անցնում,*
*Բայց քո՝ մարտերում գրկած գարունը,*
*Բայց քո՝ արյունով գնված գարունը,*
*Լցվել է մեր շեն հանդ ու ձորերը,*
*Եվ քո փոխարեն աշխարհում մեր նոր*
*Հազար շուրթեր են բացվում ծիծաղով,*
*Ասում՝ գարո՜ւն է...*

Կարո՞ղ է որեւէ մեկը անտարբեր կարդալ այս տողերը: Մեծ հանցա՞նք ենք գործել, որ մեր աշակերտ-աշակերտուհիներին հանձնարարել ենք արցախյան գոյամարտի մասին գրված այս հայրենասիրական բանաստեղծությունը անգիր սովորել: Թողնենք մի կողմ դասագրքին տրվող ծրագրային ուղղակի պահանջը՝ ճիշտ առոգանություն ու շեշտադրում սովորեցնել անգիրների միջոցով: Դա մեր լեզվագետին էլ է քաջ հայտնի:

Դասագրքում տարբեր թեմաներով տրված են արձակ եւ չափածո տեքստեր, որոնք նախ նպատակաուղղված են անձի աշխարհայացքի ձեւավորմանն ու զարգացմանը, ապա նրա բանավոր խոսքի բարելավմանը, գրավոր խոսքի մշակմանը, քերականական նյութի ավելի հեշտ յուրացմանը: Մինչդեռ այդ երկուսը միտումնավոր հանձնարարվում են անգիր սովորել:

Իսկ դուք, պարո՛ն լեզվագետ, դուք ի՞նչ եք մտածել, երբ հինգերորդ դասարանի դասագրքում ներկայացրել եք «Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի նրա մեջ» հեքիաթը, այդ ինչպե՞ս եք դաստիարակում տասներկուամյա մեր երեխաներին. եղբորդ մեջ տե՛ս քո հակառակորդի՞ն եւ հանուն հայրական ժառանգության ամեն ինչ արա նրան ոչնչացնելու համա՞ր: Դա՞ է ձեր՝ անձի ձեւավորման ու դաստիարակման չափանիշը, թե՞ «Եթե ես կախարդական արդուկ ունենայի» վերնագրով շարադրությունը, որը դարձյալ հանձնարարում եք քսանմեկերորդ դարի աշակերտներին: Ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, թե խեղճ երեխաները այդ արդուկով ի՞նչ պիտի անեին, բայց որ դուք հրաշալի պատկերացրել եք, միանգամայն ապացուցում են ձեր այս վերջին ամիսների զազրախոսությունները, որոնցով փորձում եք արդուկել միամիտ մարդկանց ուղեղները: Զո՛ւր մի ջանացեք: Հանրապետության մտավորական եւ գիտական շրջանակներին ձեր գործելաոճը քաջ հայտնի է: Խորհուրդս մեկն է, թեեւ ձեզ ոչ մի խորհուրդ չի փրկի. ապաշխարե՛ք, քանզի աստծո գործերն անքննելի են:

**Հետգրություն**

**Հոգեբաններն ասում են, որ երբ որեւէ մեկը կենտրոնանում է մեկ այլ անձի վրա, եւ նրա բոլոր մտքերը պտտվում են միեւնույն անձի շուրջ, առաջ են գալիս հոգեկան հավասարակշռության խախտման ախտանիշներ: Իզո՛ւր մի՛ քայքայեք ձեր առանց այն էլ քայքայված առողջությունը, զբաղվե՛ք ձեր եղած ու չեղած դասագրքերի անհաշվելի թերությունները շտկելով. ես շարունակելու եմ լռել:**

**ՓԱՌԱՆՁԵՄ ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ**

# Մոլդովան վախենում է Ադրբեջանից կամ ուշ է հիշել ՎՈւԱՄ-ի մասին

Երբ հարեւան Վրաստանում ամենուրեք առանց երկար-բարակ փնտրելու, տեսնում են ռուսաստանյան «Լուկօյլ» ընկերության բենզալցակայանները, կարելի է եւ զարմանալ, թե ինչպես է ռուսաստանյան ընկերությունը, վրաց-ռուսական հարաբերությունների ներկայիս անմխիթարության վիճակում, գործում Վրաստանում, եկամուտներ ստանում: Բայց հասկանալ կարելի է, քանի որ առողջ դատելու հավակնություններ ունեցող երկրում ոչ մի հիմք չկա մերժելու այն ընկերություններին մուտքը սեփական տնտեսություն, որոնց ներկայացրած երկրի ղեկավարության հետ լեզու չես կարողանում գտնել:

Վրաստանը, այս ամենով հանդերձ, մնում է ՎՈւԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) կազմակերպության անդամ, բայց գործարարության առումով կարծես թե հաշվի չի առնում երկիրը, միայն թե օգուտ լինի, ինչն, ի դեպ, «Լուկօյլի» դեպքում արդարացված է, քանի որ վրացական ճանապարհային ոստիկանության մեքենաներ հաճախ կարելի է տեսնել այդ ընկերության բենզալցակայաններում լիցքավորվելիս:

ՎՈւԱՄ-ի մեկ այլ անդամ՝ Մոլդովան, փաստորեն, իր երկկողմ այլ գործարքների համար մի երրորդ կողմից չի էլ ամաչում, ներողություն է հայցում: Ադրբեջանում Մոլդովայի դեսպան Իգոր Բողյուն երեկ, ըստ «Ռեգնում» գործակալության, Բաքվում հայտարարել է, թե Մոլդովան «ներողություն է խնդրել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւից՝ Հայաստան սպառազինության մատակարարման համար»: Ներողությունն էլ, ըստ մոլդովացի դեսպանի, հայտնել է երկրի վարչապետ Վլադիմիր Ֆիլատը:

Մոլդովայի դեսպանը հաստատել է արդեն իսկ աղմուկ հանած տեղեկությունը, որ Հայաստանին վաճառվել էր 3 մլն դոլարի սպառազինություն, միեւնույն ժամանակ, այդ հանգամանքը որակելով «քաղաքական առումով ոչ ճիշտ քայլ, չնայած Հայաստանի առնչությամբ չկան միջազգային սանկցիաներ, որ կարգելեին զենքի վաճառքը»: Դեսպանն ինքն իրեն դրել է, իր խոսքերով, հիմար վիճակի մեջ, քանի որ Ադրբեջանի նախագահից Մոլդովայի ներողությունը, որ կապ չունի միջազգային սանկցիաների հետ, դառնում է անիմաստ, եթե ոչ վախի կամ ստորաքարշության դրսեւորում:

Մոլդովայի դեսպանը միայն նշել է, որ Ադրբեջանն ու Մոլդովան ՎՈւԱՄ անդամ են, ու հույս է հայտնել, որ զենքի վաճառքը վնաս չի հասցնի այդ երկուսի հարաբերություններին: Ընդ որում՝ Մոլդովայում, պարզվում է, զենք ով ասես կարող է վաճառել, քանի որ խուճապի մատնված մոլդովացիները միանգամից երկու հանձնաժողով են ստեղծել՝ խորհրդարանական եւ Անվտանգության խորհրդի, որ «հետաքննեն այդ միջադեպը»:

Որ այս տեղեկությունը մեծ արձագանք էր գտել ոչ միայն հայկական, այլեւ ադրբեջանական մամուլում, բացատրությունը հանրահայտ է: Իսկ որ մոլդովական մամուլն էլ էր իրար անցել, այնքան էլ հասկանալի չէ, թեեւ վերջերս Կիեւում տեղի ունեցած կոնֆերանսներից մեկում մոլդովացի մի քանի խմբագիրների ու լրագրողների խոսքերը կարող են ամենայն հանգստությամբ դիտվել որպես բացատրություն:

Մոլդավացի գործընկերները պատմում էին, որ այս տեղեկության տարածման օրերին մոլդովական ողջ մամուլն իրար էր խառնել այդ երկրում Ադրբեջանի դեսպանը: Վերջինս մամուլի ներկայացուցիչներից ոչ միայն պահանջում էր տեղ-տեղ հայտնված՝ զենքի վաճառքին նաեւ Ադրբեջանի մասնակցության լուրը հերքել, այլեւ հասցրել է կոպտել, անգամ վիրավորել մոլդովացի լրագրողներին, վերջիններիս տպավորությամբ, կասկածի տակ դնելով Ադրբեջանի դեսպանի դիվանագետ լինելու հանգամանքը: Դեսպանի հետ «ջերմ զրույցից» տպավորված էին զրուցակիցներս, իսկ Ադրբեջանի պաշտոնյաների խոսքին հետեւողի համար զարմանալի ոչինչ չկա. տիպիկ գործելակերպ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Ոստիկանների հեղափոխություն» Եգիպտոսում

Եգիպտոսի տարբեր քաղաքներում տեղի են ունենում ոստիկանների ցույցեր: Տեղական լրատվամիջոցները հաղորդում են, որ ՆԳՆ հազարավոր աշխատակիցներ փողոցներ են դուրս եկել «ֆինանսական եւ վարչարարական» պահանջներով:

Գործադուլների պատճառով Կահիրեի կենտրոնում երթեւեկությունը կազմալուծված է: Չեն աշխատում Կահիրեի միջազգային օդանավակայանի, առողջավայրերի, որոշ նահանգների բանտերի ոստիկանները, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Նրանց գլխավոր պահանջների թվում են աշխատավարձերի բարձրացումը, աշխատապայմանների բարելավումը եւ մի շարք կաշառասուն ոստիկանապետների հեռացումը: Վերջիններս ՆԳՆ-ում մնացել են նախկին ներքգործնախարար Հաբիբ ալ Ադլիի ժամանակներից, որը ձերբակալվեց նախագահ Հոսնի Մուբարաքի պաշտոնանկությունից հետո եւ ներկայումս հայտնվել է մեղադրյալի աթոռին:

Երեքշաբթի օրը Խուրգադա առողջավայրում հարյուրավոր ոստիկաններ ներխուժել են նահանգային անվտանգության ուժերի կենտրոնակայան եւ ջարդուփշուր են արել ամեն ինչ, իսկ ոստիկանապետը դիմել է փախուստի:

Խուրղադայում ենթակառույցի օբյեկտների մեծ մասը փաստորեն մնացել է անպաշտպան: Քաղաքի միջազգային օդանավակայանում հիմա անվտանգությունը ստիպված ապահովում են զինծառայողները: Խախտված է նաեւ զբոսաշրջության մեկ ուրիշ կենտրոնի՝ Մարսա-Ալամի օդանավակայանի աշխատանքը:

ՆԳՆ-ում ոստիկաններին կոչ են արել դադարեցնել բողոքի ելույթները, քանի որ «ֆինանսական եւ վարչարարական» պահանջների մեծ մասը արդեն բավարարված է: ՆԳՆ ղեկավարությունը նախազգուշացրել է, որ գործադուլների շարունակումը վնասում է երկրի անվտանգությանը, քաղաքացիների շահերին եւ պետհիմնարկների աշխատանքին, ուստի անկարգություններ կազմակերպող ոստիկանները կարող են ենթարկվել պատասխանատվության, այդ թվում՝ քրեական:

# Թունիսում հաղթեցին իսլամիստները



Թունիսի խորհրդարանի կիրակնօրյա ընտրություններից հետո հաշվարկված են գրեթե բոլոր քվեաթերթիկները. կասկած չկա, որ հաղթել են իսլամիստները: Եթե նախագահ Բեն Ալիի կառավարման 23 տարիներին իսլամիստներն անցել էին ընդհատակ, ապա նրա տապալումից կես տարի հետո նրանք պատրաստվում են կազմել կառավարություն: Ճիշտ է, հարկ կլինի որոնել դաշնակիցներ, արձանագրում է ՌԻԱ գործակալությունը:

Իսլամիստական «Էն-Նահդա» («Վերածնություն») կուսակցության կողմնակիցները արդեն հաղթանակ են տոնում, թեեւ ընտրությունների արդյունքները դեռ պաշտոնապես չեն հրապարակվել: Կուսակցություններն իրենց անվանում են չափավոր իսլամիստներ: Նրանք մտադիր են Թունիսում քաղաքականություն վարել ըստ իսլամական օրենքների:

Թունիսը համարվում է Հյուսիսային Աֆրիկայի եւ արաբական արեւելքի առավել եվրոպականացված երկիրը: Այստեղ արաբերենին զուգահեռ ուսումնասիրում են ֆրանսերեն: Բայց երկրի նոր իշխանությունները մտադիր են վերանայել սահմանադրությունը: Ճիշտ է, «Էն-Նահդան» ստացել է քվեների մոտ 40 տոկոսը, բայց 60 տոկոսը ստացած աջերը, ձախերը եւ կենտրոնամետ ուժերը մասնատված են:

Հարեւան Եգիպտոսում իշխանության գլուխ անցած «Մուսուլման եղբայրները» նույնպես իրենց անվանում են չափավորական, բայց զբոսաշրջիկների թիվն արդեն կրճատվել է, եւ տուժում է բնակչությունը:

«Արաբական գարնան» հետեւանքով արաբական երկրները կորցրել են 55 մլրդ դոլար: Թունիսի ընտրություններից հետո սպասվում է, որ կտուժի նաեւ այդ երկրի զբոսաշրջությունը:

ԻՐԱՆ

# Ահմադինեժադ. «Մարդկության խնդիրները աշխարհիկ մտածելակերպի հետեւանք են»



**Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հայտարարել է, որ մարդկության բոլոր խնդիրները որոշ պետությունների «սրբապիղծ եւ անիրավ» ղեկավարների «աշխարհիկ մտածելակերպի» հետեւանք են: Այդ մասին հաղորդում է IRNA գործակալությունը:**

**Որպես ապացույց նախագահը նշել է, որ ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի նման երկրները միշտ օժանդակել են ուրիշ պետությունների «քայքայմանը, բռնակալությանը, խտրականությանը, նվաստացմանը, աղքատությանը եւ հետամնացությանը»:**

**Ահմադինեժադի կարծիքով, դրա լիակատար հակադրությունը դարձավ արաբական երկրների հեղափոխությունների շարքը, երկրներ, որտեղ մարդիկ «արդարություն, արժանապատվություն եւ ազատություն են փնտրում սուրբ մարգարե Մուհամմեդի ճանապարհի վրա»:**

**Նախագահը կարծում է, որ ապստամբները գործում են ընդդեմ ԱՄՆ-ի, սիոնիստների եւ նրանց դաշինքի:**

**Միեւնույն ժամանակ նա դատապարտել է ՆԱՏՕ-ի մասնակցությունը Լիբիայի քաղաքացիական պատերազմին, հայտարարելով, որ Հյուսիսատլանտյան դաշինքը հակամարտությանը միջամտեց լոկ այդ երկրի բնական հարստությունները կողոպտելու նպատակով: «Ձեր խաղերով մարդկանց չեք խաբի: Դուք ընդամենը ողորմելի խաբեբա եք», ասել է Ահմադինեժադը՝ դիմելով ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենին:**

**Բիրջանդ քաղաքում (Հարավային Խորասանի նահանգ) բազմահազար մարդկանց առջեւ ունեցած ելույթի վերջնամասում նախագահը հայտարարել է, որ Լիբիական հեղափոխության առաջնորդ Մուամմար Քադդաֆին սպանվեց այն պատճառով, որ չափազանց շատ բան գիտեր Արեւմուտքի ղեկավարների կաշառվածության մասին:**

**Մահմուդ Ահմադինեժադը անչափ աստվածավախ մարդու համբավ ունի: Իր յուրաքանչյուր հրապարակային ելույթից առաջ նա փառաբանում է Բարձրյալին եւ նրա մարգարեներին:**

# Արեւմուտքի նավթային ընկերությունները վերադառնում են Լիբիա

## *Քադդաֆիի սպանությունը ծրագրել էին Վաշինգտոնում*

**Բրիտանական British Petroleum (BP) ընկերությունը հայտարարել է, որ մտադիր է վերադառնալ Լիբիա եւ վերսկսել նավթի ու գազի նոր հանքավայրերի որոնման աշխատանքները: Նման աշխատանքների առաջին նախագիծը պետք է մեկնարկեր 2011-ի փետրվարին, բայց քաղաքացիական պատերազմը բրիտանացիներին թույլ չտվեց սկսել օգտակար հանածոների հանքավայրերի որոնումները, նշում է Ռոյթեր գործակալությունը:**

**Royal Dutch Shell ընկերությունը իր հերթին հայտնել է, որ Լիբիայի նոր ղեկավարությունից երաշխիքներ է ստացել հին պայմանագրերի առնչությամբ եւ նույնպես մտադիր է զբաղվել նավթի ու գազի նոր հանքավայրերի որոնումներով:**

**Պատերազմից առաջ Լիբիան արտահանում էր օրական 1,6 մլն բարել նավթ, որից 1,1 մլն-ը ընկնում էր Ազգային նավթային ընկերությանը: Մնացյալը արդյունահանում եւ վաճառում էին օտարերկրյա ֆիրմաները: Այդ շուկայում ամենամեծ բաժինը պատկանում էր իտալական Eni ընկերությանը:**

**Արտասահմանյան ընկերությունները Լիբիայի գանձարանին վճարում էին շատ մեծ հարկեր: CNN-ի տվյալներով, Քադդաֆիի վարչակարգի օրոք հարկային տոկոսադրույքը հասնում էր մինչեւ 93 տոկոսի: Նոր իշխանությունները, ամենայն հավանականությամբ, օտարերկրացիներին կառաջարկեն ավելի հարմար պայմաններ: Նորվեգիայում նավթարդյունահանող ընկերությունների հարկը կազմում է 75 տոկոս, ԱՄՆ-ում՝ 50 տոկոս:**

**Ինչ վերաբերում է Մուամմար Քադդաֆիի սպանությանը, «Նյու Յորք թայմս» թերթը գրում է, որ ընդամենը մեկ շաբաթ առաջ՝ հոկտեմբերի 19-ին Սպիտակ տանը 1,5-ժամյա խորհրդակցություն է տեղի ունեցել Մուամմար Քադդաֆիի ճակատագրի հարցի շուրջը: Ամերիկացիների համար բարդությունն այն էր, որ ձերբակալության դեպքում գնդապետին դատելը դժվար կլիներ, մինչդեռ նրա սպանությունը համարվում էր հնարավոր տարբերակներից մեկը:**

**Եթե որոշվեր Քադդաֆիին դատել Լիբիայում եւ չհանձնել միջազգային դատարանին, ապա դատավարությունը հազիվ թե համապատասխաներ միջազգային քրեական իրավունքի նորմերին: Իսկ Լիբիայի ինքնիշխանությունը չխախտելով նրան «ուղղորդելը» անհնար կլիներ:**

**Հնարավոր սցենար էր համարվում այն, որ Քադդաֆին ապաստան ստանա երրորդ երկրում, ասենք, Չադում կամ Հասարակածային Գվինեայում: Օբամայի աշխատակազմի պաշտոնյաները փորձում էին համաշխարհային ընկերակցության արձագանքը կանխատեսել ի դեպս նման հնարավորության:**

**Թերթը հիշեցնում է, որ Լիբիայի նախկին ղեկավարի դիահերձման արդյունքները հերքում են այն նախնական վարկածը, թե նա մահացել է հիվանդանոցի ճանապարհին ոտքից ծանր վիրավորվելու հետեւանքով: Պարզվել է, որ կրակել են գնդապետի գլխին եւ որովայնին: Թե կոնկրետ ով է կրակել՝ մինչեւ օրս մնում է անհայտ:**

ՀԱՄԵՐԳ՝ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ

## «Այլեւ երբեք»

Հայկական ցեղասպանությունը որպես հայ ժողովրդի մեծ ողբերգություն, անցնող այս տասնամյակների ընթացքում իր արտահայտությունն է գտել նաեւ հայ եւ համաշխարհային արվեստի տարբեր ստեղծագործություններում:




Այս շարքը համալրելու է գալիս Ֆլորա Մարտիրոսյանի, Artists for Peace-ի եւ FMS Media-ի կազմակերպած համերգը «Այլեւ երբեք» խոսուն խորագրով: Այս համերգը հայոց սիրված երգչուհու, ինչպես նաեւ համաշխարհային լեգենդ Ստիվի Ուոնդերի, որը ՄԱԿ-ի խաղաղության դեսպաններից է, եւ մասնակցությամբ հայ, հույն, ասորի եւ ամերիկյան երգիչների դառնալու է Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման արտահայտությունը երգի լեզվով:

Նման ձեռնարկումները ոչ միայն կատարվածը դատապարտելու, այլեւ նոր ողբերգությունները կանխելու խորհուրդն ունեն, որովհետեւ «Այլեւ երբեք» խորագիրը նախ եւ առաջ մտահոգություն է, որ այլեւ երբեք չկրկնվի նման մի ոճրագործություն, այլեւ երբեք որեւէ ժողովուրդ չանցնի հայ Գողգոթայի ճանապարհներով:



Արվեստի աշխարհի տարբեր երկրների ու ժողովուրդների ներկայացուցիչների միջազգային այս զորակցությունը աննախադեպ է եւ գալիս է վկայելու համերաշխությունը հանուն համամարդկային արժեքների:

Խորհրդանշական է, որ այս համախմբումը որպես գեղարվեստական ծրագիր իրականացվում է գործուն մասնակցությամբ մեր սիրված երգչուհի Ֆլորա Մարտիրոսյանի, որ կենդանի շարունակողն ու կատարողն է հայ ժողովրդական ու աշուղական երգերի ու հայ երգարվեստի: Նրա «Դլե յաման» մեզ է փոխանցում Վանա ծովակի ծփանքը, արեւմտահայ բնաշխարհի հայ աշխատավորի ճնչով լցված լինելու պատրանքը ստեղծում:

Ֆլորա Մարտիրոսյանի կատարումներով մի անգամ եւս հաղորդվենք այդ ճնչին, ինչպես նաեւ Artists for Peace-ի եւ FMS Media-ի, Նունե Սերոյանի եւ մյուս կազմակերպիչների միջոցով տեսնենք Հայոց ցեղասպանության ողբերգության ընկալումը եւ արտահայտումը մեր ժողովրդի բարեկամների եւ այն արվեստագետների կողմից, ովքեր այս ձեռնարկմամբ երգի սահմաններ չճանաչող լեզվով աշխարհին մեկ անգամ եւս զգուշացնում են նման ողբերգության հնարավոր կրկնության անթույլատրելիության մասին:

Կոչ ենք անում Սփյուռքի եւ ի մասնավորի ԱՄՆ-ի մեր հայրենակիցներին, որ Լոս Անջելեսի նշանավոր Գիբսոն (Gibson) ամֆիթատրոնում նոյեմբերի մեկին կայանալիք այս համերգին իրենց համախումբ ներկայությամբ մեկ անգամ եւս ոգեկոչեն մեր անմեղ նահատակների հիշատակը, իրենց երախտագիտությունը հայտնեն մեր ժողովրդի ցավը կիսողներին եւ նրանց հետ միասին աշխարհին հիշեցնեն, որ Ցեղասպանությունը անցնելու ժամկետներ չունեցող մի ոճրագործություն է, որի դատապարտումը մեր բազմաբյուր անշիրիմ նահատակներից առավել հարկավոր է այսօրվա մարդկությանը:

**Տ. ՏԱԹԵՎ ՎՐԴ. ՀԱԿՈԲՅԱՆ**
Ռումանիոյ հայոց թեմի առաջնորդ

## «Գրանշան-2011» մրցույթն ամփոփել է արդյունքները

ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ արդեն չորրորդ անգամ անցկացվում է տառատեսակների «Գրանշան-2011» միջազգային մրցույթը: Այն այս անգամ կայացել է Իսլանդիայի մայրաքաղաք Ռեյկյավիկում, ATypI-ի հերթական համաժողովին զուգընթաց: Մրցույթին ներկայացվել էին 59 աշխատանք 9 երկրներից: Երեկ լրագրողների հետ հանդիպեցին համաժողովի եւ մրցութային հանձնաժողովի աշխատանքներին Հայաստանից մասնակցած Էդիկ Ղաբուզյանը եւ նախարարության ներկայացուցիչ Գառնիկ Գույումջյանը, որոնք ներկայացրին չորս անվանակարգերում հաղթող ճանաչվածներին:

«Գրանշան-2011»-ի մրցութային աշխատանքները ցուցադրվել են Ալեքսանդրիայի (Եգիպտոս) գրադարանում անցկացված ցուցահանդեսին ու մեծ հետաքրքրության արժանացել: Հայկական տեքստային տառատեսակներ անվանակարգում առաջին կարգի մրցանակ չի տրվել ոչ մեկին, իսկ երկրորդին արժանացել է («Արեգակ») Հրաչուհի Գրիգորյանը Հայաստանից: Երրորդ մրցանակը բաժին է հասել Միացյալ Թագավորությունից Բեն Ջոնսին՝ «Էմրիս» տառատեսակի համար:

Կիրիլյան, հունական եւ ազատ ոճի տեքստային տառատեսակներում հաղթող են ճանաչվել ՌԴ-ի եւ Միացյալ Թագավորության ներկայացուցիչները: Լավագույն տառատեսակ «Գլխավոր մրցանակը» եւ 1000 եվրո պարգեւը շնորհվել է Ալեքսանդրա Կորոլկովային (Ռուսաստան) «Բելադոննա» տառատեսակի համար:

2012-ին Գրանշանը կանցկացվի Հայաստանում, տեղեկացրին մասնակիցները ու ցավով նշեցին, որ երիտասարդները չեն հետաքրքրված տառարվեստի զարգացմամբ:

**«Ազգի»** հարցին, թե ի վերջո որն է մրցույթի նպատակը, բանախոսները բացատրեցին, որ «Գրանշանի» հիմնական նպատակն ինտերնետում ունենալ որակյալ տառեր...»:

Ցավոք, նման մրցույթները կարծես թե նպատակին չեն ծառայում, եւ սայլը տեղից չի շարժվում, թե չէ չորս տարվա ընթացքում շատ բան կփոխվեր ինտերնետում՝ մեր տառատեսակների հետ կապված:

**Ս. Ս.**

## Պինկաս Ցուկերմանի ելույթին շատերն էին սպասում

Համաշխարհային երաժշտության ֆենոմեն **Պինկաս Ցուկերմանը** չորս տասնամյակ շարունակ գերել է երաժշտասերներին ու նրանց պարգեւել անմոռանալի պահեր: Նրա երաժշտական հանճարը, անհավանական տեխնիկան եւ անբեկանելի գեղարվեստական չափանիշները զարմանք են պատճառում հանդիսատեսին ու քննադատներին: Ցուկերմանի անունը հարգի է իբրեւ ջութակահար, ալտահար, դիրիժոր, ուսուցիչ եւ կամերային երաժիշտ: **«Ազգը»** անդրադարձել է աշխարհի հանրահռչակ 10 երաժիշտների ցանկում ընդգրկված Պինկաս Ցուկերմանի ստեղծագործական ուղուն, եւ աշխարհի շատ բեմեր գրաված երաժշտին:



Եվ ահա երկրորդ օրն է, որ «Գրեմմի»-ի կրկնակի մրցանակակիր երաժիշտը 1,5 տարվա ընդմիջումից հետո եկել է Հայաստան: Լրագրողները երեկ անդրանիկ համերգից առաջ հանդիպեցին ու շփվեցին մեծանուն երաժշտի հետ: Արամ Խաչատրյան համերգասրահում ՀՊՖՆ-ի հետ (գեղղեկ եւ դիրիժոր Էդվարդ Թոփչյան) շատ կարճ փորձից հետո Ցուկերմանը հիացած նվագախմբից ու դիրիժորից, երկու ձեռքերի բութ մատերը վերեւ բարձրացրեց ու բարձրաձայն ասաց. «Հրաշալի էր, բռավո, բռավո»: Իհարկե, ֆիլհարմոնիկի համար դա մեծ գնահատական է եւ պարծենալու պատճառ, որ աշխարհահռչակ երաժիշտը շատ կարճ փորձից այդպես ոգեւորված էր ու երեկոյան համերգին անհամբերությամբ էր սպասում: Պինկաս Ցուկերմանն ասաց, որ շատ ուրախ է կրկին Հայաստան վերադառնալու առիթի համար: «Տեսնում եմ, որ քաղաքը ավելի կենդանացել ու գեղեցկացել է: Հրաշալի է նման փոփոխություններ տեսնելը եւ հուսամ, որ առաջընթացը կշարունակվի: Այժմ աշխարհը տնտեսական անկում է ապրում ամենուրեք, եւ մենք շատ մեծ ջանքեր ենք գործադրում, որպեսզի այն երաժշտությունը, որը մենք կերտում ենք, պահենք ամենաբարձր մակարդակով, անկախ աշխարհի իրավիճակից: Եվ մենք մշակել ենք զիջումների հատուկ քաղաքականություն, որպեսզի մենք, չնայած այդ դժվարություններին, շարունակենք մեր արվեստը՝ մեր հոնորարների հաշվին»:

Նյու Յորքի հանրահայտ «Ջուլիարդ» քոլեջում Իվան Գալամյանի սանը՝ Ցուկերմանը իր ուսուցչին մեծ երաժիշտ համարեց եւ նշեց, որ նա երկու սերունդ ջութակահարներ է կրթել ու պատրաստել, որոնք փայլել են աշխարհի բեմերում: «Նա ամբողջությամբ նվիրված էր ջութակին, կատարյալ նվիրյալ իր գործին», ասաց Ցուկերմանը: **«Ազգի»** հարցին պատասխանելով, նշեց, որ աշխարհում շատ հայտնի երաժիշտներ, ջութակահարներ կան. «Ես 10-12 հոգու գիտեմ 25-30 տարեկանների շրջանում, որոնք շատ տաղանդավոր են, շատ աշխատասեր եւ շատ հրաշալի մարդիկ են: Ես վստահ եմ, որ մեր ավանդույթը կշարունակվի, ու կան արժանավորներ: Իսկ ձեր հարցը, թե հայեր կա՞ն այդ ցանկում, այո՛, կան եւ ես կարող եմ նշել թավջութակահար Նարեկ Հախնազարյանին, որին արդեն հրավիրել եմ Կանադա, ինձ հետ նվագելու: Սերգեյ Խաչատրյանին էլ գիտեմ, նրա մասին շատ եմ լսել»: Իսկ իր ամենամեծ նվաճումը այս տարվա ընթացքում երաժիշտը համարեց իր անդրանիկ թոռնուհու Վերոնիկայի ծնունդը, եւ հպարտանում էր, որ պապիկ է դարձել ու ցույց տվեց 7 օրական փոքրիկի նկարը:

Երաժշտասերները մեկ անգամ եւս հիացան ու վայելեցին Պինկաս Ցուկերմանի անկրկնելի նվագը Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, որը գլխավորում էր դիրիժոր Էդվարդ Թոփչյանը: Ծրագրում հնչեցին Վերդիի, Մաքս Բրուխի եւ Չայկովսկու ստեղծագործությունները ու արժանացան ջերմ ընդունելության:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

## ՀԲԸՄ-ն նշում է Գրիգոր Սաթամյանի հոբելյանը

Առաջիկա կիրակի օրը՝ հոկտեմբերի 30-ին, Փասադենայի ՀԲԸՄ-ի կենտրոնում նշվելու է հայտնի դերասան, սիրված կատակերգու եւ տաղանդավոր ռեժիսոր Գրիգոր Սաթամյանի թատերական գործունեության 50-ամյակը: Խմբագրությանը հասցեագրված մամլո հաղորդագրության փոխանցմամբ՝ այդ առիթով հատուկ Լոնդոնից Մ. Նահանգներ է հրավիրված բանախոսելու Ասատուր Կյուզելյանը: Ելույթներ են ունենալու նաեւ Սարգիս Մինասյանը եւ հոբելյարի վաղեմի ընկերները: Տեղի է ունենալու գեղարվեստական պատշաճ ծրագիր:

Գրիգոր Սաթամյանը ՀԲԸՄ-ի «Արտավազդ» թատերախմբի սիրված եւ հարգված այժմյան բեմադրիչն է: Բեյրութի ամերիկյան համալսարանն ավարտելուց հետո նա ուսումը շարունակել է ֆիլմարվեստի տեխնիկայի լոնդոնյան հաստատությունում եւ Բրիստոլի «Օլդ Վիկ» թատրոն-ստուդիայում: Այնուհետեւ Կովենտրի Սիթիի (Անգլիա) Բելգրադյան թատրոնում ներկայացումներ տալուց հետո վերադարձել է Բեյրութ եւ ստանձնել այնտեղի ՀԲԸՄ-Վահրամ Փափազյան թատերախմբի գեղարվեստական ղեկավարի պաշտոնը, միաժամանակ դասավանդելով Ամերիկյան համալսարանում:

Իր ղեկավարությամբ թատերախումբը հաջող ելույթներ է ունեցել Հայաստանում 1972-ին, իսկ 1975-ին՝ Ֆրանսիայում, Անգլիայում եւ Կիպրոսում: Հաջողությունների որպես հետեւանք հրավիրվել է դասավանդելու Բրիստոլի «Օլդ Վիկ» թատրոն-ստուդիա եւ ապա դառնալու Նյու Յորքի հայտնի «Կոլոնեյդս թեադր լաբ» թատերախմբի բեմադրիչը:



Սաթամյանը ՀԲԸՄ-ի ակտիվ անդամներից է: 1970-ականներից սկսած նա ՀԲԸՄ-ի թատերախմբեր է հիմնել Բոստոնում, Դետրոյթում, Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում եւ Լոս Անջելեսում: Մինչեւ օրս բեմադրել է 75 պիես, երեք օպերետ: Դերեր է ստանձնել 85 ներկայացումներում, որոնցից հիշատակության արժանի են Շիրվանզադեի «Չար ոգին», Նշան Փարլաքյանի «Տաշի՛կ, աղոթի՛ր ինձ համար» եւ Րաֆֆի Արզումանյանի «Ցեցերը» (անգլերենով՝ Հուդզոնի «Բեքստեյջ» թատրոնում): Նա նաեւ ամերիկյան հեռուստատեսային եւ գեղարվեստական ֆիլմերում է նկարահանվել, ինչպես օրինակ՝ «Ամբողջ ճշմարտությունը», «Ծիծաղի թշնամիները», «Ազատությունից հետո», «Առաքելությունը՝ Բեռլին», «Մի սխալ քայլ» եւ «Պետք է սիրել շներին» ժապավենները:

Բրիստոլի թատրոն-ստուդիայի տնօրեն Նաթ Բրեների հավաստմամբ, «Սաթամյանը ամենատաղանդավոր եւ ամենափայլուն ուսանողներից մեկն է եղել: «Ես ուրախ եմ, որ նրան դասավանդել եմ», ասել է նա:

**Հ. Ծ.**

# Մարզական

## Պատանի հայ շախմատիստները ջախջախում են մրցակիցներին

Թուրքիայում ընթացող մինչեւ 16 տարեկանների շախմատի համաշխարհային պատանեկան օլիմպիադայում պարզապես գերազանց են հանդես գալիս հայ շախմատիստները, որոնց գերազանցությունը մրցակիցների նկատմամբ ակնհայտ է: Օլիմպիադան անցկացվում է բավական խիստ ռեժիմով. մասնակիցներն օրական երկու մրցախաղ են անցկացնում: Այնպես որ պատանի շախմատիստների վրա ծանրաբեռնվածությունը բավականին մեծ է: Սակայն դա չի խանգարում մեր պատանիներին հիանալի արդյունքների հասնել:



3-րդ տուրում Հայաստանի հավաքականը 3-1 հաշվով հաղթեց Հնդկաստանի ընտրանուն, որն ընդամենը կես միավորով էր հետ մնում մեր շախմատիստներից: Առաջին երեք խաղասեղանների վրա մեր պատանիները հաղթեցին: Կարեն Գրիգորյանը հաղթեց Սահաջ Գրովերին, Հովհաննես Գաբուզյանը պարտության մատնեց Կուշիկ Գիրիշին, իսկ Տիգրան Հարությունյանն առավելության հասավ Վիանի Անտոնիոյի նկատմամբ:

Իսկ ահա 4-րդ խաղասեղանի վրա Արման Միքայելյանը պարտվեց Բաջաջ Պրինցեին: Դա հայ շախմատիստների առաջին պարտությունն էր օլիմպիադայում:

4-րդ տուրում մեր պատանիների մրցակիցը Վրաստանի հավաքականն էր: Հայ շախմատիստները կրկին վերելքով խաղացին եւ 4-0 հաշվով ջախջախեցին մրցակցին: Իրենց օգտին հաղթական միավորներ գրանցեցին Կարեն Գրիգորյանը, Հովհաննես Գաբուզյանը, Տիգրան Հարությունյանն ու Ջոհրակ Ամրեսյանը, որոնց մրցակիցներն էին համապատասխանաբար Իրակլի Բերաձեն, Շալվա Նադիրաշվիլին, Գուգա Բուրդուլին եւ Նինո Խոմերիկին:

Այս հաղթանակների շնորհիվ Հայաստանի հավաքականն ավելի ամրապնդեց առաջատարի իր դիրքը: Մեր շախմատիստները վաստակել են թիմային 8 միավոր: Բոլոր պարտիաներում վաստակած միավորների քանակը 14,5 է: 2-րդ տեղում Ռուսաստանի հավաքականն է, որն ունի 12 միավոր: Ռուսները 3-րդ տուրում 1,5-2,5 հաշվով զիջեցին ադրբեջանցիներին, իսկ հաջորդ մրցախաղում ջախջախեցին շվեյցարացիներին (4-0): 11 միավոր ունի Ադրբեջանի հավաքականը, որը 4-րդ տուրում ոչ-ոքի խաղաց Հնդկաստանի ընտրանու հետ: 10-ական միավորով հաջորդ տեղերում են Վրաստանի, Հնդկաստանի, Իրանի եւ Թուրքիա-Սպիտակի հավաքականները:

5-րդ տուրում ուշադրության կենտրոնում կլինի Հայաստանի եւ Ռուսաստանի հավաքականների մրցավեճը, որի ելքը կարեւոր է չեմպիոնի տիտղոսի համար մղվող պայքարում: Ադրբեջանցիները կմրցեն իրանցի շախմատիստների հետ, հնդիկների մրցակիցները կլինեն չեխերը, իսկ Վրաստանի հավաքականը կհանդիպի Թուրքիա-Սպիտակ թիմի հետ:

## Պֆայֆերի անհավանական հնարքները զարմացրին բոլորին

Առաջին անգամ Հայաստան է ժամանել աշխարհահռչակ մոտոցիկլավար, ստանթրայդինգի աշխարհի եւ Եվրոպայի քառակի չեմպիոն, գերմանացի Կրիս Պֆայֆերը: Երեք երեխաների հայր Պֆայֆերը ողջ աշխարհում հայտնի է մոտոցիկլով իր անհավանական հնարքներով: Նրա շոուները մեծ հաջողությամբ են անցել աշխարհի մի շարք երկրներում՝ հիացմունք եւ միեւնույն ժամանակ մեծ զարմանք առաջացնելով Պֆայֆերի անհավանական հնարքներից, մոտոցիկլի վարժ վարումից:



Երեկ բազմամարդ էր Երեւանի Ստեփան Շահումյանի անվան հրապարակը: Բազմությունը հավաքվել էր անձամբ ականատես լինելու աշխարհահռչակ մոտոցիկլավարի անզուգական վարպետությամբ: Եվ մարդիկ հիացած էին գերմանացի մարզիկի հնարքներով՝ մոտոցիկլի վարում հետեւի կամ առջեւի անիվի վրա, ընթացքում զանազան թռիչքներ մոտոցիկլի նստատեղին, ձեւավոր վարում, կտրուկ արգելակում եւ այս ամենի հետ միասին նա հասցրեց նույնիսկ համբուրվել աղջիկներից մեկի հետ:

Տպավորիչ էր նաեւ Պֆայֆերի մոտոցիկլով պարը պարող աղջկա հետ: Իհարկե, դժվար է նկարագրել այն ամենը, ինչ երեկ երեկոյան ցուցադրեց աշխարհահռչակ մոտոցիկլավարը: Այդ ամենը հարկավոր էր տեսնել ու զգալ: Կարծում ենք, երեւանցիները սուր զգացողություններով ու հաճելի տրամադրությամբ հեռացան հրապարակից: Այդ երեկո Պֆայֆերն իր անհավանական հնարքներով պարզապես գերեց բոլորին:

## Թենիսիստուհիները սկսել են մրցավեճը

Ստամբուլում մեկնարկել է թենիսի կանանց աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունը: Ութ թենիսիստուհիներ պայքար են մղում ուժեղագույնի տիտղոսի համար: Նախնական փուլում 8 թենիսիստուհիները բաժնվել են 2 խմբում: «Սպիտակ» խմբում ընդգրկվել են ռուսաստանցի Մարիա Շարապովան, բելառուս Վիկտորիա Ազարենկոն, չինացի Լի Նան եւ ավստրալացի Սամանտա Ստոսուրը:

«Կարմիր» խմբում պայքարի ոլորտը կներգրավվեն դանիացի Կարոլինա Վոզնյացկին, ռուսաստանցի Վերա Զվոնարյովան, չեխ Պետրա Կվիտովան եւ լեհ Ագնեշկա Ռադվանսկայան:

Նշենք, որ կանանց համաշխարհային դասակարգման ցուցակը գլխավորում է Կարոլինա Վոզնյացկին, 2-րդ եւ 3-րդ տեղերում են Մարիա Շարապովան ու Պետրա Կվիտովան:

Ստամբուլում առաջինը կորտ դուրս եկան «Կարմիր» խմբում ընդգրկված Վերա Զվոնարյովան եւ Պետրա Կվիտովան: Վերջինս այս տարի հաղթող էր ճանաչվել Ուիմբլդոնի մրցաշարում: Կվիտովան հաղթեց 2 խաղափուլում՝ 6-2, 6-4:

«Կարմիր» խմբի 2-րդ մրցախաղում մրցեցին Կարոլինա Վոզնյացկին եւ Ագնեշկա Ռադվանսկայան: Առաջին խաղափուլն ավարտվեց Ագնեշկայի հաղթանակով (7-5): Միայն մեծ ջանքերի գնով Վոզնյացկուն հաջողվեց շահել մրցախաղը (6-2, 6-4):

«Սպիտակ» խմբում անհաջող մեկնարկեց Մարիա Շարապովան, որը պարտվեց Սամանտա Ստոսուրին (1-6, 5-7): Դա Շարապովայի անդրանիկ պարտությունն էր Ստոսուրի հետ անցկացրած 10 հանդիպումներում: Նախորդ 9 մրցախաղերում Ստոսուրին չէր հաջողվել նույնիսկ մեկ խաղափուլ շահել:

### ՖՈՒՏԲՈԼ

## 19 տարեկանները մտան հաջորդ փուլ

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը կշարունակի պայքարը Եվրոպայի առաջնության ընտրական հաջորդ փուլում: Հայ պատանիները Երեւանում անցկացված ընտրական մրցաշարի 1-ին փուլի վերջին խաղում 1-0 հաշվով հաղթելով Անդորրայի հավաքականին, հաջորդ փուլի ուղեգիր նվաճեցին: Խմբի հետնապահի նկատմամբ հաղթանակը ձեռք բերվեց մեծ դժվարությամբ: Ունենալով խաղային մեծ առավելություն, հայ ֆուտբոլիստները բավական ժամանակ չէին կարողանում գրավել մրցակցի դարպասը, որը մեծ ուժերով էր պաշտպանվում:



Հանդիպման ելքը վճռվեց 82-րդ րոպեին: Հովհաննես Հովհաննիսյանը ներխուժեց տուգանային հրապարակ, որտեղ իրացնելով 11 մ հարվածը, հաղթանակ պարգեւեց իր թիմին: Մյուս խաղում Հունաստանի եւ Սլովակիայի հավաքականները մեկական գնդակ փոխանակեցին: Այսպիսով, 7 միավորով հույները դարձան խմբի հաղթող, 6 միավորով 2-րդ տեղը զբաղեցրին հայ ֆուտբոլիստները, որոնք մինչ այդ հաղթել էին սլովակներին (2-1) եւ պարտվել հույներին (1-2): Հայերն ու հույները կշարունակեն պայքարն ընտրական հաջորդ փուլում, որտեղ խաղարկվելու են եզրափակիչի ուղեգրերը:

## Ուժեղագույնն Ալավերդու հանդբոլիստներն են

ՖԻՄԱ-ի մարզադահլիճում իրենց մրցավեճն ավարտեցին մինչեւ 14 տարեկան հանդբոլիստների Հայաստանի առաջնության եզրափակիչ փուլի մասնակից թիմերը:

Մրցաշարի մեկնարկն աչքի ընկավ անակնկալ արդյունքներով: Հայաստանի գործող չեմպիոն հանդբոլի մասնագիտացված մարզադպրոցի (ՀՄԴ) 1-ին թիմն անսպասելիորեն պարտվեց նույն մարզօջախի 2-րդ թիմին (25-27): Թվում էր, թե այդ պարտությունը պատահականություն էր: Սակայն 2-րդ խաղում էլ ՀՄԴ-1-ի հանդբոլիստները կրկին անհաջող հանդես եկան: Աջափնյակի թիմի հետ հանդիպման արդեն առաջին խաղակեսում ՀՄԴ-ի հանդբոլիստները զիջում էին 9-14 հաշվով: Հանգստից հետո աջափնյակցիների առավելությունն ավելի զգալի դարձավ, որոնք հաղթեցին 38-17 հաշվով:

ՀՄԴ-2-ի հանդբոլիստները 23-29 հաշվով զիջեցին Արցախի հավաքականին: Ալավերդու թիմը, որ առաջին տուրում ոչ-ոքի (24-24) էր ավարտել հանդիպումը Աջափնյակի հանդբոլիստների հետ, 2-րդ խաղում 18-16 հաշվով հաղթեց վանաձորցիներին:

3-րդ տուրում կենտրոնականը Աջափնյակի եւ Վանաձորի հանդբոլիստների մրցավեճն էր: Մեկ գնդակի առավելությամբ (24-23) խաղը շահեցին աջափնյակցիները: Ալավերդու թիմը մեծ առավելությամբ (47-23) հաղթեց ՀՄԴ-2-ին: Այսպիսով, 3 տուրից հետո 5-ական միավորով առաջատարի դերը ստանձնեցին Աջափնյակի եւ Ալավերդու թիմերը: Հաջորդ տուրում առաջատարները շարունակեցին հաղթարշավը: Աջափնյակի թիմը 46-22 հաշվով հաղթեց ՀՄԴ-2-ին, իսկ ալավերդցիները 43-18 հաշվով պարտության մատնեցին Արցախի հավաքականին:

Չեմպիոնն ի հայտ եկավ մրցաշարի վերջին օրը: Ընդ որում չեմպիոնին որոշելու համար հարկ եղավ հաշվի առնել խփած եւ բաց թողած գնդակների տարբերությունը, քանի որ Աջափնյակի եւ Ալավերդու թիմերը վաստակել էին հավասար՝ 9-ական միավոր: Ավարտական տուրում ալավերդցիները հաղթեցին ՀՄԴ-1-ին (29-16), Աջափնյակի թիմը պարտության մատնեց Արցախի հավաքականին (27-22):

Եվ այսպես, չեմպիոն հռչակվեց Ալավերդու թիմը, աջափնյակցիները գրավեցին 2-րդ տեղը: Մրցանակային 3-րդ տեղը զբաղեցրեց Վանաձորի հավաքականը: Մրցաշարի լավագույն խաղացող ճանաչվեց ալավերդցի Հրաչ Մարգարյանը, որն արժանացավ հատուկ մրցանակի: Մրցանակակիր թիմերը պարգեւատրվեցին մեդալներով եւ պատվոգրերով:

## Զիջեցին առաջատարի դիրքերը

Ֆրանսիայում ընթացող շախմատի միջազգային մրցաշարում առաջատարների խմբում գտնվող Ավետիք Գրիգորյանի եւ Հրանտ Մելքումյանի համար 5-րդ տուրը հաջող չէր: Գրիգորյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Նենադ Սուլավային, իսկ Մելքումյանը կես միավոր վաստակեց Գավայն Ջոնեսի հետ մրցավեճում: 5-րդ տուրից հետո մեր շախմատիստները կորցրին առաջատարների իրենց դիրքերը: 4,5-ական միավորով աղյուսակը գլխավորեցին Լաուրենս Ֆրեսինետը եւ Իվան Չեպարինովը, որոնք 6-րդ տուրում կմրցեն միմյանց հետ: Մելքումյանը վաստակել է 4 միավոր եւ 14 շախմատիստների հետ հետապնդում է առաջատարներին: Իսկ Գրիգորյանն ունի 3,5 միավոր:

Տուրը հաջող էր մեր մյուս երկու շախմատիստների համար: Վահե Բաղդասարյանը հաղթեց Լենարդ Լովեին, Աղասի Ինանցը պարտության մատնեց Սիմոն Ստոերին: Երկուսն էլ վաստակել են 3,5 միավոր:

## Տեւեսը տուգանվեց

«Մանչեսթր Սիթիի» արգենտինացի ֆուտբոլիստ Կառլոս Տեւեսն ակումբի կողմից տուգանվել է 1 մլն ֆունտ ստեռլինգով: Ֆուտբոլիստը նման խիստ պատժի է ենթարկվել այն բանի համար, որ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 2-րդ տուրում «Բավարիայի» հետ խաղում հրաժարվել էր փոխարինման մտնել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

## Բրիտանացի խորհրդարանականներ եւ ադրբեջանական քարոզչական խմբավորումը

*1-ին էջից*

Ընկերության գլխավոր ֆինանսավորողն ու տնօրենը 26-ամյա գործարար Թալե Հեյդարովն է, որի հայրը Ադրբեջանի նախարարներից է: Թալեն Լոնդոնի տնտեսագիտական կրթօջախի նախկին ուսանողներից է: Նրան անվանում են «Ադրբեջանի Աբրամովիչ» այն բանից հետո, երբ միլիոններ տրամադրեց իր երկրի ֆուտբոլային թիմին եւ տարեկան մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ աշխատավարձով հավաքագրեց անգլիական սպորտային թիմի նախկին ավագ Թոնի Ադամսին:

Ադրբեջանը ավտորիտար հիմունքներով կառավարում է նախագահ Իլհամ Ալիեւը, եւ բրիտանական արտգործնախարարության գնահատմամբ՝ այդ երկրի մարդու իրավունքների ցուցանիշը ցածր է: Լրագրողներին այնտեղ հաճախակի հարձակումների են ենթարկում եւ բանտարկում, ընդդիմադիր թեկնածուներին՝ որակազրկում, իսկ քվեարկողներին՝ ահաբեկում: Մարտին «Միջազգային ներում» կազմակերպությունը Ադրբեջանի իշխանություններին կոչ արեց վերջ դնել հետապնդումներին բոլոր այն ակտիվիստների, որոնք, ներշնչված Մերձավոր Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի իրադարձություններից, պատրաստվում էին բողոքի ցույց կազմակերպել: Կալանավորվածները պատմում են, որ ոստիկանական կալանավայրերում փորձել են իրենց ջրահեղձ անել եւ սպառնացել բռնաբարել: Արտգործնախարարության մի ներկայացուցիչ նշեց, որ մարդու իրավունքների խնդիրը երկրում մնում է կրիտիկական: «Եվրոմիության հետ միասին մենք մեր մտահոգությունները բարձրաձայնել ենք շատ անգամներ, բայց դրանք դեռեւս այժմեական են մնում»:

ԵԱ ընկերությունը իր գործունեությունը ընդարձակել է Վեստմինստրում խորհրդարանի ադրբեջանամետ խմբավորման 20 անդամներին մատուցելով գրասենյակային ծառայություններ եւ կազմակերպելով հանդիպումներ ու ընդունելություններ: Ընկերությունը այս տարի հիմնել է «Ադրբեջանի պահպանողական ընկերները» միավորումը, որի կազմում են 25 պահպանողական, «Տորի» կուսակցության անդամներ, ինչպիսիք են Ռոբերտ Հալֆոնը (միավորման փոխնախագահ), Քրիս Պինչերը (գանձապահ), փոխխոսնակ Նայջել Էվանսը եւ «1992 կոմիտեի» նախագահ Գրեհեմ Բրեյդին:

Այս շաբաթ իրեն դիմած լրագրողներին Ֆիլդն ասել է, որ «անհեթեթություն» է պահանջել, որ չստանձներ իրեն առաջարկված նոր պաշտոնը: Նա նշել է, որ մի քանի առիթներով հանդիպել էր Հեյդարովի հետ: «Պատճառը, որ ես երկու անգամ այնտեղ (Ադրբեջանում) եմ եղել, այն է, որ այդ երկիրը փորձում է բարելավել իր ֆինանսական ծառայությունների ոլորտը: Այստեղ շահերի բախման խնդիր չկա», ասել է նա՝ ավելացնելով. «Ես ստորագրել եմ «պաշտոնական գաղտնապահման հրամանագիրը» եւ որեւէ գաղտնիք չեմ տրամադրելու ոչ ադրբեջանական կառավարությանը, ոչ էլ ուրիշ որեւէ մեկին, որի հետ առնչություն ունեմ: Անհեթեթություն եւ սխալ է մտածելը, որ անվտանգության մարմիններում կամ հետախուզությունում ընդգրկված որեւէ մեկը չի կարող նաեւ ունենալ այլ հետաքրքրություններ»:

Վերոնշյալ ընկերության մի ներկայացուցիչ էլ նշեց, որ Հեյդարովները միակ ֆինանսավորողները չեն այդ խմբավորման, որ դա անկախ կազմակերպություն է եւ կապ չունի Ադրբեջանի կառավարության հետ:

Մյուս կողմից՝ Բասեթլոն ներկայացնող լեյբորիստական կուսակցության անդամ՝ խորհրդարանական Ջոն Մանը, հակադրվելով Ֆիլդին, ընդգծել է, որ «դա ակնհայտորեն շահերի բախման խնդիր է եւ ցույց է տալիս, թե ինչքան սխալ է թույլ տալ խորհրդարանականներին զբաղվել մեկ ուրիշ գործով»:

**Թարգմ.՝ Հ. Ծ.**

## Շնորհակալություն ոստիկանության մայորին՝ մարդկային վերաբերմունքի համար

Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի բնակիչ Սուրեն Անուշավանի Մակարյանը խնդրում է մեր թերթի միջոցով իր եւ իր ընտանիքի երախտագիտությունը հաղորդել Գեղարքունիքի մարզի ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 4-րդ վաշտի աշխատակից, ոստիկանության մայոր Արայիկ Մովսիսյանին: Նա Սեւան-Գավառ ճանապարհին նկատելով փողոցում մեքենայից վայր ընկած Սուրենին՝ ցույց է տվել առաջին բուժօգնություն եւ իր մեքենայով տեղափոխել Սեւանի հիվանդանոց ու մի քանի ժամ հետեւել բժիշկների հոգատար աշխատանքին, որի արդյունքում հնարավոր է եղել փրկել Սուրենի կյանքը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. նոյեմբերի 4-ին, ժամը 12.00-ին, ՀՀ Շիրակի մարզի Բանդիվանի գյուղապետարանում տեղի կունենան «Լայթեկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Փարոս» ՓՀԷԿ-ի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հասարակական լսումներ:

Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք. Երևան, Կոմիտասի 29 հասցեում կամ Բանդիվանի գյուղապետարանում.

հեռ. (010) 220218, (010) 221485, (010) 221568

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Ա. Գ. Հայրապետյաններ» ՍՊԸ դիմել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով՝ ՀՀ Սյունիքի մարզ գ. Աշոտավան էներգետիկայի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Աշոտավան, հեռ. 098.345359

---

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում առկա է ԱրմենՏել ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ "Siemens"-ի արտադրության շահագործումից հանված բջջային կապի սարքավորումների (մոդուլներ, կանգնակներ, սնուցման բլոկներ եւ այլ սարքեր) առաջարկ:

Գույքի ցանկին ծանոթանալու, ինչպես նաեւ գնային առաջարկ ներկայացնելու եւ այլ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել Բորսա՝ ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցե:

---

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակելի տուն , մակերեսը՝ 287,1 ք.մ., հողամաս՝ 0,06 հա: Հասցե՝ ՀՀ, ք. Արմավիր, 107 թաղ. 13/1 տուն: Մեկնարկային գինը՝ 18000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով, «բաց» ընթացակարգով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում 28.11.2011 թ.-ից մինչեւ 31.12.2011 թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ. 12:00-ին: Գույքն իրենից ներկայացնում է 1980-ական թվականների կառույց, գրավադրված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում: Սահմանված է 200000 ՀՀ դրամի չափով նախավճար, որի վճարման վերջնաժամկետն է ամեն աճուրդի նախորդ օրվա ժ. 14:00-ն: Նախավճարը վճարվում է «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:

Աճուրդի մասնակիցները ներկայացնում են՝ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագիր, նախավճարի վճարման անդորրագիր, իրավաբանական անձի դեպքում՝ լիազորագիր, պետ. ռեգիստրի վկայականի պատճենը եւ նախավճարի վճարման անդորրագիր: Աճուրդում հաղթող է արձանագրվում ամենաբարձր գին առաջարկած անձը: Ներկայացված լոտին կարող են ծանոթանալ գույքի նշված հասցեում, 27.10.2011թ.-ից մինչեւ 24.11.2011 թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 12:00-ից մինչեւ 15:00-ն: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու, այն անվճար ստանալու եւ այլ լրացուցիչ տեղեկությունների համար այցելել բորսա, զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

## Հայտարարություն

(Նիդեռլանդներում գտնվող) Հաագա քաղաքի դատարանը հրամայել է հետեւյալ կորած անձի վկայակոչումը՝ Միխայիլ Երվանդովիչ Թաթունց, ծնված՝ 1947թ.ի հունիսի 21-ին, Բաքու, Ադրբեջան, վերջին հայտի բնակավայրը՝ Հայաստան ներկայանալու սույն դատարանի առջեւ, 2011թ.ի նոյեմբերի 28-ին, ժամը՝ 12.15-ին, հիմքը՝ վկայություն տալու կորած անձի մահվան իրավաբանական ենթադրության վերաբերյալ՝ ներկայացված խնդրագրի կապակցությամբ: Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել պարոն Կ.Լ.Մ. Կրեմերի հետ, Հերտոխենբոս (Նիդեռլանդներ):

Collet Advocaten s-Hertogenbosch
Stationsweg 14-A
5211 TW s-Hertogenbosch
Հեռախոս՝ 00 31 73 6139242
Ֆաքս՝00 31 73 6126242

ConverseBank
*Բոլորի համար*

Ժամկետային ավանդ «Երեւան»



**Կոնվերս բանկը սկսում է «ԵՐԵՎԱՆ» նոր ժամկետային ավանդի ակցիան՝ նվիրված Էրեբունի-Երեւանին**

«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն մինչեւ դեկտեմբերի 31-ը կազմակերպում է նոր տեսակի «ԵՐԵՎԱՆ» ժամկետային ավանդի ընդունման ակցիա՝ նվիրված Էրեբունի-Երեւանին: Ավանդներն ընդունվում են ՀՀ դրամով՝ 12 ամիս ժամկետով եւ 12% տոկոսադրույքով, տոկոսների վճարումը՝ ամեն ամիս, նվազագույն գումարը՝ 200 000 ՀՀ դրամ:

«Երեւան» նոր տեսակի ժամկետային ավանդ ներդնող ավանդատուների միջեւ կանցկացվի խաղարկություն, որի արդյունքում ավանդատուներից հինգ հաջողակները կշահեն 5/հինգ/ գրամանոց 999,9 հարգի ոսկու ձուլակտորներ:

Ակցիայի ընթացքում ավանդատուներին, առանց տարեկան սպասարկման եւ տրամադրման վճարների գանձման, կիատկացվի WOMAN'S CARD /Հայաստանում նախադեպը չունեցող քարտ է՝ նախատեսված միայն կանանց համար/: Առանց տարեկան սպասարկման վճարի գանձման կտրամադրվեն VISA CLASSIC, MASTERCARD STANDART: Իսկ 1 միլիոն դրամ եւ ավելի ավանդ ներդնող ավանդատուներին կտրամադրվի VISA COLD, MASTERCARD GOLD՝ քարտային հաշվի սպասարկման վճարի 50% զեղչով:

Հիշեցնենք, որ Կոնվերս բանկը պարբերաբար իրականացրել է նմանատիպ ակցիաներ , որոնց արդյունքում գլխավոր մրցանակի արժանացած հաճախորդները շահել են ուղեւորություն դեպի Դիսնեյ Լենդ, Թուրին, Եգիպտոս, Դուբայ Պրահա:

Կոնվերս բանկում ներկայումս գործում են «Շանս», «Պրոգրես», «Օրական», «Թոշակ» եւ «Բարեկեցիկ ապագա», ավելացման իրավունքով՝ «Կարաս», երեխաների անունով՝ կուտակային «Մանուկ» ավանդատեսակները:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 26.10.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: